

## Գլուխ VIII

Հետագա դասախոսություններից մեկում Գ.-ն անդրադարձավ գիտակցության հարցին:

- Մարդու ոչ հոգեկան, ոչ էլ ֆիզիկական գործառույթները հնարավոր չէ հասկանալ, եթե չընդունել այն փաստը, որ դրանք երկուսն էլ կարող են գործել գիտակցության տարբեր մակարդակներում:

Ընդհանուր առմամբ գոյություն ունի մարդու գիտակցության չորս մակարդակ (նա ընդգծեց «մարդ» բառը): Սակայն հասարակ մարդը, այսինքն՝ մարդ համար մեկը, երկուսը և երեքը, ապրում է գիտակցության ամենացածր մակարդակում: Գիտակցության երկու ավելի բարձր մակարդակները մարդու համար անհասանելի են, և չնայած, որ նրա մոտ կարող են դրանք երբեմն փայլատակել, նա ընդունակ չէ ընկալելու դրանք, և դատում է գիտակցության հենց այն մակարդակից, որում սովորաբար գտնվում է:

Գիտակցության առաջին երկու՝ ամենացածր մակարդակները հետևյալն են. *քունը*՝ պասսիվ վիճակը, որում մարդն անց է կացնում իր կյանքի մեկ երրորդ մասը, կամ շատ հաճախ կյանքի կեսը: Երկրորդը՝ այն վիճակն է, որում մարդն անց է կացնում իր կյանքի մյուս մասը. այդ ընթացքում մարդիկ քայլում են փողոցներով, գրում գրքեր, քննարկում վերամբարձ թեմաներ, մասնակից դառնում քաղաքականությանը, սպանում միմյանց՝ համարելով այդ ամենն ակտիվ գործունեություն, «պարզ գիտակցություն» կամ «գիտակցության զարթոնք»: «Պարզ գիտակցություն» կամ «գիտակցության զարթոնք» տերմինները զավեշտալի են, հատկապես, երբ գիտակցեք, թե իրականում ինչպիսին է այն դրությունը, որում մարդիկ ապրում և գործում են:

Գիտակցության երրորդ մակարդակը *սեփական անձի հիշողությունն* է, ինքնագիտակցությունը կամ սեփական գոյի գիտակցումը: Ընդունված է համարել, որ մենք տիրապետում ենք գիտակցության այս մակարդակին կամ կարող ենք ձեռք բերել այն, եթե ցանկանանք: Մեր գիտությունը և փիլիսոփայությունը հաշվի չեն առել այն փաստը, որ մենք չենք *տիրապետում* գիտակցության այս մակարդակին, որ մենք չենք կարող մեր մեջ ձևավորել այն՝ սուսկ ցանկությամբ կամ որոշմամբ:

Գիտակցության չորրորդ մակարդակը կոչվում է *գիտակցության օբյեկտիվ մակարդակ*: Այս վիճակում մարդիկ կարող են տեսնել իրերի դրությունը այնպես, ինչպես որ դրանք կան իրականում: Գիտակցության նման փայլատակումներ նույնպես կարող են առաջանալ մարդկանց մոտ: Բոլոր ազգերի կրոնները հնարավոր են դարձնում գիտակցության այս ձևը, որը կոչում են «լուսավորում»՝ տալով նաև այլ տեսակի անվանումներ. սակայն այս երևույթին հնարավոր չէ խոսքային ձևակերպում տալ: Օբյեկտիվ գիտակցությանը հասնելու միակ միջոցը ինքնագիտակցության զարգացումն է: Եթե հասարակ մարդն արհեստականորեն հասնում է օբյեկտիվ գիտակցության մակարդակին, իսկ այնուհետև անցնում է իր գիտակցության սովորական վիճակին, ապա նա ոչինչ չի հիշում՝ կարծելով, թե մի պահ կորցրել է իր գիտակցությունը: Սակայն ինքնագիտակցության հոգեվիճակում մարդը կարող է օբյեկտիվ գիտակցության պոռթկումներ ունենալ ու հիշել դրանք:

Մարդու մոտ գիտակցության չորրորդ մակարդակը ենթադրում է ամբողջովին ~~սեփական~~ այլ վիճակ. դա ներքին աճի և սեփական անձի վրա տարած երկարատև ու տքնաջան աշխատանքի արդյունք է:

Սակայն գիտակցության երրորդ մակարդակը բնական իրավունքն է մարդու (*այնպիսին ինչպիսին, որ նա է*), և եթե մարդը դրան չի տիրապետում, ապա դա միմիայն իր սեփական կյանքի սխալ պայմաններից է: Առանց որևէ չափազանցության կարելի է ասել, որ ներկայումս գիտակցության երրորդ մակարդակը մարդու մոտ դրսևորվում է միայն շատ հազվադեպ

փայլատակումներով, սակայն քիչ, թե շատ, նրանում այն կարելի է հատուկ վարժությունների միջոցով ավելի մշտական դարձնել:

Մարդկանց մեծամասնության համար, նույնիսկ՝ կիրթ և մտածող մարդկանց, ինքնագիտակցության ձեռքբերման ճանապարհին հիմնական խոչընդոտ է ներկայացնում այն փաստը, որ իրենք հավատում են, թե ունեն ինքնագիտակցություն և դրա հետ կապված ամեն ինչ՝ անհատականություն, որը ենթադրում է մշտական և անփոփոխ Ես, կամք, *անելու* ունակություն և այլն: Հազիվ թե մարդուն հետաքրքրեք, եթե նրան ասեք, թե երկար և տքնաջան աշխատանքի միջոցով նա կարող է ձեռք բերել մի բան, որը ըստ իրեն նա արդեն ունի: Ընդհակառակը՝ նա կկարծի, որ դուք կամ խելագար եք, կամ, սեփական շահերից ելնելով, ցանկանում եք նրանք խաբել:

Գիտակցության երկու ավելի բարձր մակարդակներ՝ «ինքնագիտակցությունը» և «օբյեկտիվ գիտակցությունը», կապված են մարդու մոտ *բարձրագույն կենտրոնների* գործունեության հետ:

Բացի այն կենտրոններից, որոնցից մենք արդեն խոսել ենք, մարդն ունի այլ կենտրոններ՝ «բարձրագույն զգայական» և «բարձրագույն մտավոր»: Այս կենտրոնները մեր ներսում են, նրանք լիովին զարգացած են և մշտապես գործում են, սակայն դրանց աշխատանքը չի հասնում մեր սովորական գիտակցությանը: Դրա պատճառն այն է, ինչ մենք կոչում ենք «պարզ գիտակցություն»:

Գիտակցության տարբեր մակարդակների միջև տարբերությունը հասկանալու համար եկեք անդրադառնանք գիտակցության առաջին մակարդակին, որը քունն է: Սա գիտակցության բացարձակ սուբյեկտիվ վիճակն է:

Մարդն ընկղմված է երազների մեջ՝ անկախ նրանից նա հիշում է դրանք, թե ոչ. դա էական չէ: Եթե նա նույնիսկ որևէ իրական տպավորություններ է ստանում, ինչպիսիք են հնչյունները, ձայները, տաքությունը, ցուրտը, սեփական մարմնի զգացողությունը, այդ ամենը նրանում միայն սուբյեկտիվ պատկերներ են առաջացնում: Այնուհետև մարդն արթնանում է: Առաջին հայացքից սա կարծես գիտակցության բացարձակ մեկ այլ վիճակ լինի: Նա կարող է շարժվել, խոսել այլ մարդկանց հետ, նախնական հաշվարկներ կատարել, տարրորոշել վտանգը, խուսափել դրանից և այլն:

Բնականաբար նա ավելի լավ վիճակում է գտնվում, քան քնած ժամանակ: Սակայն, եթե մենք ավելի շատ խորանանք և փորձենք ներթափանցել նրա ներքին աշխարհը, մտքերը, փորձենք տեսնել նրա գործողությունների դրոպապատճառները, ապա կհասկանանք, որ նա գտնվում է այնպիսի վիճակում, ինչպիսին քնի մեջ էր: Սա նույնիսկ ավելի վատ է, քանի որ քնի մեջ նա պասսիվ է, այսինքն՝ որևէ բան չի կարող ձեռնարկել: Արթուն ժամանակ, սակայն, նա կարող է անընդհատ գործել, և նրա բոլոր գործողությունների հետևանքները կարտացոլվեն իր կամ իր շրջապատի վրա: *Մինչդեռ նա ինքն իրեն չի հիշում:* Նա մեքենա է. ամեն բան նրա հետ *տեղի է ունենում:* Նա չի կարող ընդհատել իր մտքերի հոսքը, նա չի կարող վերահսկել իր երևակայությունը, զգացմունքները, ուշադրությունը: Նա ապրում է սուբյեկտիվ աշխարհում՝ «Ես սիրում եմ», «Ես չեմ սիրում», «Ինձ դուր է գալիս», «Ինձ դուր չի գալիս», «Ես ցանկանում եմ», «Ես չեմ ցանկանում», այսինքն՝ որտեղ իր կարծիքով նա գիտի, թե ինչ է նրան դուր գալիս և ինչ դուր չի գալիս, կամ թե ինչ է ցանկանում կամ չի ցանկանում: Նա չի տեսնում իրական աշխարհը: Իրական աշխարհը թաքնված է երևակայության պատի ետևում: *Նա քնի մեջ է ապրում:* Նա քնած է: Այն, ինչ կոչվում է «պարզ գիտակցություն», քուն է և ավելի վտանգավոր քուն, քան գիշերային քունը մահճակալի մեջ: Եկեք մի դրվագ վերցնենք մարդկության կյանքից: Օրինակ՝ պատերազմը: Ներկայումս պատերազմ է ընթանում: Դա ի՞նչ է նշանակում: Դա նշանակում է, որ մի քանի միլիոն քնած մարդ փորձում է ոչնչացնել մի քանի միլիոն այլ քնած մարդկանց: Նրանք իհարկե նման բան չէին անի, եթե արթուն լինեին: Այս ամենը հենց քնի պատճառով է տեղի ունենում:

Գիտակցության երկու մակարդակներն էլ՝ քնած և արթուն վիճակները, հավասարապես սուբյեկտիվ են: Միայն *սեփական անձը հիշելու դեպքում* է մարդն իրականում արթնանում: Դրանից հետո նրան շրջապատող կյանքը մեկ այլ նշանակություն է ստանում: Նա հասկանում է, որ դա քնած մարդկանց կյանք է՝ մի կյանք, որտեղ բոլորն ընկղմված են քնի մեջ: Այն ամենն ինչ ասում են և անում են մարդիկ, քնի մեջ են անում: Այդ ամենը որևէ արժեք չի կարող ունենալ: Իրականում միայն զարթոնքը և զարթոնքին ուղղված ամեն ինչ կարող է արժեքավոր լինել:

Քանի՞ անգամ եք ինձ հարցրել այստեղ, կարող են արդյոք պատերազմները դադարեցվել: Իհարկե կարող են: Դրա համար պարզապես անհրաժեշտ է որպեսզի մարդիկ արթնանան: Թվում է, թե չնչին բան է: Սակայն դա ամենադժվարին գործն է, քանի որ մեզ այս քնին է դրդում և դրա մեջ պահում մեզ շրջապատող կյանքը և բոլոր պայմանները:

Ինչպե՞ս կարող է մարդն արթնանալ: Ինչպե՞ս կարող է մարդը խույս տալ այս քնից: Մրանք կարևորագույն և ամենաեական խնդիրներն են, որոնց կարող է հանդիպել մարդը: Սակայն, նախ և առաջ, անհրաժեշտ է համոզվել դրանում՝ փորձելով արթնանալ: Երբ մարդը հասկանում է, որ չի հիշում իր սեփական անձը և որ սեփական անձը հիշելը նշանակում է որոշ չափով արթնանալ, երբ միևնույն ժամանակ մարդը իր սեփական փորձով տեսնում է, թե որքան դժվար է հիշել սեփական անձը, նա հասկանում է որ չի կարող արթնանալ սոսկ ցանկությամբ: Ճիշտ կլինի ասել, որ մարդն ինքնուրույն չի կարող արթնանալ: Սակայն, արթնանալու հնարավորություն կարող է առաջանալ, օրինակ, այն դեպքում, եթե քսան հոգի պայմանավորվեն, որ նրանցից ով որ առաջինը արթնանա, պարտավոր է արթնացնի նաև մյուսներին: Երբեմն նույնիսկ սա է անբավարար, քանի որ բոլոր քսանն էլ կարող են միևնույն ժամանակ քուն մտնել և երազել՝ կարծելով, թե կարթնանան: Հետևաբար անհրաժեշտ է ավելին: Նրանց պետք է հետևի մի մարդ, ով քնած չի, կամ ով նրանց պես հեշտությամբ քուն չի մտնում և եթե նույնիսկ քուն է մտնում, ապա գիտակցաբար, որը չի վնասի ոչ իրեն, ոչ էլ մյուսներին: Նրանք պետք է գտնեն նման մարդու և *վարձեն* նրան, որպեսզի նա նրանց արթնացնի և թույլ չտա կրկին քնի մեջ ընկղմվել: Առանց դրա հնարավոր չէ արթնանալ: Սա պետք է հասկանալ:

Հնարավոր է մտածել հազարավոր տարիներ, մի ամբողջ գրադարան գիրք գրել, միլիոնավոր տեսություններ առաջադրել և այս ամենը քնի մեջ՝ չստանալով զարթոնքի հնարավորություն: Ընդհակառակը, այս գրքերը և տեսությունները, որոնք գրվել և ստեղծվել են քնի մեջ, պարզապես կքնացնեն այլ մարդկանց:

Քնի գաղափարը նոր չի: Աշխարհի արարման ժամանակներից ի վեր մարդկանց ասվել է, որ նրանք քնած են, որ պետք է զարթնեն: Քանի՞ անգամ է դա ասվել Կտակարանում, օրինակ: «Չարթնիր», «տես», «մի քնիր»: Նույնիսկ Քրիստոսի աշակերտներն էին քնած, երբ Քրիստոսը վերջին անգամ աղոթում էր Գետսեմենի այգում: Այդ ամենի մասին ասվել է: Սակայն արդյոք մարդիկ հասկանում են: Մարդիկ ընկալում են դա սոսկ որպես խոսքաձև, արտահայտման միջոց, փոխաբերություն: Նրանք չեն հասկանում, որ դա պետք է բառացիորեն ընկալել: Եվ կրկին հեշտ է հասկանալ, թե ինչու: Այն բառացիորեն հասկանալու համար անհրաժեշտ է մի քիչ արթնանալ կամ համենայն դեպս փորձել դա անել: Ես լրջորեն ասում եմ, որ ինձ մի քանի անգամ հարցրել են, թե ինչու ոչինչ չի ասվում Կտակարանում, չնայած այն բանի, որ այդ մասին խոսվում է գրեթե կտակարանի յուրաքանչյուր էջում: Սա վկայում է այն մասին, որ մարդիկ քնի մեջ են կարդում Կտակարանը: Այնքան ժամանակ, որքան մարդը խորը քնի մեջ է և ամբողջովին ընկղմված է երազների մեջ, նա նույնիսկ չի կարող խոհել այն փաստի մասին, որ նա քնած է: Եթե նա խոհեր, որ քնած է, ապա կարթնանար: Եվ այսպես շարունակ: Մարդիկ նույնիսկ ամենաչնչին պատկերացումը չունեն, թե այս քնի պատճառով որքան բան են կորցնում: Ինչպես արդեն ասեցի, լինելով այնպիսին ինչպիսին բնությունն է նրան ստեղծել, մարդը կարող է ինքնագիտակցություն ունենալ: Այսպես է ստեղծվել և այսպես է ծնվել նա: Սակայն նա ծնունդ է առնում քնած մարդկանց շրջապատում և իհարկե նա քուն է մտնում հենց այն պահին, երբ պետք է սկսի գիտակցել սեփական անձը: Ամեն ինչի ձեռքը խառն է սրանում.

երեխաների կողմից մեծահասակներին ակամա նմանակելու, կամավոր և ակամա ներշնչանքի, և ասպես կոչված «դաստիարակության»: Երեխայի կողմից արթնանալու ցանկացած կատարած փորձ անմիջապես կանխվում է: Սա անխուսափելի է: Մեծ ջանքեր և օգնություն է պահանջվում մարդուն քնից հանելու համար, ուր նա հայտնվել է կուտակված հազարավոր սովորությունների հետևանքով: Եվ սա շատ հազվադեպ է տեղի ունենում: Մեծամասամբ նա արդեն մանուկ հասակում կորցնում է արթնանալու հնարավորությունը. նա իր ողջ կյանքն անց է կացնում քնի մեջ և քնի մեջ էլ վախճանվում է: Դեռ ավելին՝ շատ մարդիկ իրենց ֆիզիկական մարմնից շատ ավելի շուտ են մահանում: Սակայն նման դեպքերից մենք ավելի ուշ կխոսենք:

Իսկ այժմ սևեռեք ձեր ուշադրությունը այն իրողությանը, ինչի մասին արդեն խոսել եմ: Լիարժեք զարգացած մարդը, ում ես կոչում եմ «մարդ բառիս բուն իմաստով», պետք է տիրապետի գիտակցության չորս մակարդակներին: Հասարակ մարդը՝ մարդ համար մեկը, երկուսը և երեքը, ապրում է միմիայն գիտակցության երկու մակարդակներում: Նա գիտի կամ առնվազն կարող է իմանալ գիտակցության չորրորդ մակարդակի մասին: Բոլոր այս «առեղծվածային վիճակները» և նմանատիպ սահմանումները սխալ սահմանումներ են, մինչդեռ, եթե դրանք խաբեություն չեն կամ նմանակում, ապա, մենք կկոչեինք դրանց գիտակցության օբյեկտիվ մակարդակի փայլատակումներ:

Սակայն մարդուն հայտնի չէ գիտակցության երրորդ մակարդակը. նա նույնիսկ չի էլ կասկածում, որ նման բան գոյություն ունի: Մարդը չի էլ կարող որևէ կասկածներ ունենալ, քանի որ, եթե փորձեք բացատրել նրան, թե ինչ է գիտակցության երրորդ մակարդակը, թե իրենից ինչ է ներկայացնում այն, ապա նա կպատասխանի, որ դա նրա բնական վիճակն է: Նա ինքն իրեն գիտակից էակ է համարում, որը կարող է ղեկավարել իր կյանքը: Այն երևույթները, որ հակասում են դրան, նա համարում է պատահական կամ ժամանակավոր, որոնք ինքնուրույն կկարգավորվեն: Հավատալով, որ ինքն ունի բնատուր ինքնագիտակցություն՝ մարդը իհարկե չի էլ փորձի մոտենալ դրան կամ ձեռք բերել այն: Մինչդեռ առանց ինքնագիտակցության կամ առանց երրորդ մակարդակի, որը դրսևորվում է միայն շատ հազվադեպ փայլատակումներով, չորրորդ մակարդակը հնարավոր չէ: Մինչդեռ, իրական *օբյեկտիվ* գիտելիքները, որոնց ձգտում է մարդը, ինչպես վստահեցնում է նա ինքը, միայն հնարավոր են գիտակցության չորրորդ մակարդակում, այսինքն՝ պայմանավորված են գիտակցության չորրորդ մակարդակի լիարժեք տիրապետմամբ: Այն գիտելիքները, որ ձեռք են բերվում գիտակցության սովորական վիճակում միախառնված են երազների հետ: Ահա և մարդ համար մեկի, երկուսի և երեքի ամբողջական պատկերը:

Հաջորդ գրույցը Գ.-ն սկսեց հետևյալ կերպ.

- Մարդու հնարավորությունները շատ մեծ են: Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, թե ինչի է ընդունակ հասնելու մարդը: Սակայն քնի մեջ ոչնչի հնարավոր չէ հասնել: Քնած մարդու գիտակցության մեջ նրա պատրանքները, «երազաքները» միախառնված են իրականության հետ: Նա ապրում է սուբյեկտիվ աշխարհում և դրանից երբևիցե չի կարող խույս տալ: Եվ հենց այդ պատճառով էլ չի կարող կիրառել բոլոր իր ունակությունները և ահա թե ինչու է նա միշտ ապրում իր Ես-ի մի փոքր հատվածում:

Նախկինում ասվել է, որ սեփական անձի ուսումնասիրությունը և դիտարկումը ճիշտ կիրառելու դեպքում կարող է մարդուն ստիպել գիտակցել այն փաստը, որ սովորական վիճակում իր մեքենայի և դրա ֆունկցիաների հետ ինչ-որ բան այն չէ: Մարդը սկսում է գիտակցել, որ հենց քնի պատճառով է, որ ապրում և աշխատում է իր սեփական անձի միայն մի հատվածում: Հենց այս պատճառով է, որ իր հնարավորությունները մեծամասամբ չեն իրականացվում և ունակությունների մեծ մասը մնում է չօգտագործված: Մարդը զգում է, որ կյանքից չի քաղել այն ամենն ինչ այն կարող էր պարզել նրան, և դա իր մեքենայի ընդունիչ

ապարատում որոշակի ֆունկցիոնալ թերությունների հետևանք է: Սեփական անձի ուսումնասիրության գաղափարը նրա մոտ նոր նշանակություն է ստանում: Նա զգում է, որ սովյալ պահին իր անձի ուսումնասիրությունը հնարավոր է անարդյունք մնա: Նա յուրաքանչյուր ֆունկցիա ընկալում է այնպես, ինչպես, որ այն կա, ինչպիսին կարող էր լինել կամ պետք է լիներ: Սեփական անձի ուսումնասիրությունը ստիպում է մարդուն գիտակցել սեփական անձը փոփոխելու անհրաժեշտությունը: Ուսումնասիրելով սեփական անձը՝ մարդը նկատում է, որ դրա ուսումնասիրությունը իր ներքին գործընթացներում որոշակի փոփոխությունների է հանգեցնում: Նա սկսում է հասկանալ, որ սեփական անձի ուսումնասիրությունը սեփական անձի փոփոխության զարթոնքի միջոց է: Ուսումնասիրելով ինքն իրեն՝ նա, կարծես, լուսավորում է իր ներքին գործընթացները, որոնք մինչ այժմ գործել են լիակատար խավարում: Եվ այս լույսի ազդեցության ներքո գործընթացները ինքնաբերաբար սկսվում են փոխվել: Կան մի շարք քիմիական գործընթացներ, որ կարող են տեղի ունենալ միայն լույսի բացակայության դեպքում: Նմանապես բազմաթիվ հոգեկան գործընթացներ կարող են տեղի ունենալ միայն խավարի դեպքում: Նույնիսկ գիտակցության ամենաթույլ լույսը բավարար է գործընթացի բնույթը փոխելու համար՝ բացարձակապես անհնար դարձնելով մի շարք այլ գործընթացներ: Մեր ներքին հոգեկան գործընթացները (մեր ներքին ալքիմիան) շատ ընդհանրություններ ունեն այն քիմիական գործընթացների հետ, որոնց բնույթը կարող է փոփոխվել լույսի ազդեցության ներքո, և այս հոգեկան գործընթացները ենթարկվում են նմանատիպ օրենքների:

Երբ մարդը սկսում է գիտակցելու ոչ միայն սեփական անձի ուսումնասիրության և դիտարկման անհրաժեշտությունը, այլ նաև սեփական անձի վրա տարվելիք աշխատանքը՝ այն փոխելու նպատակով, նրա ուսումնասիրության բնույթը պետք է փոխվի: Մինչ այժմ նա ուսումնասիրել է կենտրոնների աշխատանքի մանրամասները՝ փորձելով արձանագրել այս կամ այն երևույթը և լինել անկողմնակալ վկա: Նա ուսումնասիրել է մեքենայի աշխատանքը: Այժմ նա պետք է տեսնի ինքն իրեն, այլ կերպ ասած, ոչ թե առանձին մանրամասները՝ փոքրակերի և լծակների աշխատանքը, այլ ամեն ինչը միասին՝ որպես մեկ ամբողջություն, իր սեփական անձի ամբողջությունը, այնպես, ինչպես մյուսներն են նրան տեսնում:

Այս նպատակով մարդը պետք է սովորի «մտավոր կերպով լուսանկարել» իր սեփական անձը՝ իր կյանքի տարբեր պահերին և տարբեր հոգեվիճակներում: Մակայն լուսանկարները չպետք է սուկ մասերը պատկերեն, այլ ամբողջը, ինչպես նա է տեսնում: Այլ կերպ ասած՝ այս նկարները պետք է զուգահեռաբար պատկերեն ամեն բան, ինչ մարդ տեսնում է իր ներսում սովյալ պահին՝ զգացմունքները, տրամադրությունը, մտքերը, զգացումները, կեցվածքը, շարժումները, ձայնի տոնը, դեմքի արտահայտությունը և այլն: Եթե մարդուն հաջողվի լուսանկարել այս պահերը, նա շատ շուտով կհավաքի սեփական անձի լուսանկարների մի ողջ ալբոմ, որը նրան պարզ կերպով ցույց կտա, թե ինչ է նա իրենից ներկայացնում: Մակայն այդքան էլ հեշտ չէ սովորել լուսանկարել ամենահետաքրքիր և բնորոշող պահերին. թե ինչպես ֆիքսել բնորոշ կեցվածքը, բնորոշ դեմքի արտահայտությունը, բնորոշ զգացմունքները և բնորոշ մտքերը: Եթե լուսանկարները հաջող են և դրանց քանակությունը բավարար է, ապա մարդը կտեսնի, որ իր մասին ունեցած պատկերացումները, որոնցով նա ապրել է տարիներ շարունակ, շատ են տարբերվում իրականությունից:

Այն մարդու փոխարեն, որ նա ակնկալում էր տեսնել, մարդը կտեսնի մեկ ուրիշ կերպար: Այս «ուրիշ» կերպարը հենց ինքն է, բայց միևնույն ժամանակ ինքը չէ: Դա ինքն է, այնպես ինչպես մյուսներն են նրան ճանաչում, ինչպես նա է իրեն պատկերացնում և ինչպես նա դրսևորում է իրեն իր գործողությունների, խոսքերի, և այլնի միջոցով. սակայն իրականում նա լիովին այդպիսին չէ: Ինքը մարդը գիտի, որ կա մի մեծ մաս, որն անիրական է, հնարովի և արհեստական այն մարդու մոտ, ում ճանաչում են մյուսները և որին ինքը նույնպես ճանաչում է: Դուք պետք է սովորեք տարանջատել իրականը հնարովիից: Սեփական անձի

ուսումնասիրությունը և դիտարկումը սկսելու համար անհրաժեշտ է տարանջատել այն: Մարդը պետք է գիտակցի, որ նա իրականում բաղկացած է երկու անձից: Մեկը այն անձն է, որին նա կոչում է «Ես» և ում մյուսները կոչում են «Ուսպենսկի», «Զախարով» կամ «Պետրով»: Մյուսը՝ իրական «նա»-ն է, իրական «Ես»-ը, որն իր կյանքում ի հայտ է գալիս միայն շատ կարճ ակնթարթներով և կարող է հաստատուն և մշտական դառնալ միայն շատ երկարատև աշխատանքի արդյունքում:

Եթե մարդն իրեն *մեկ անձ* է համարում, նա երբևիցե իր տեղից չի շարժվի: Իր անձի վրա տարած աշխատանքը սկսվում է այն պահից, երբ նա սկսում է զգալ իր ներսում այդ *երկու անձանց*: Մեկը պասիվ է և ամենաշատը, որ նա կարող է անել, իր հետ տեղի ունեցող իրադարձությունները արձանագրելն է կամ դիտարկելը: Մյուսը, որ իրեն կոչում է «Ես», ակտիվ է և իր մասին խոսում է առաջին դեմքից, իրականում պարզապես «Ուսպենսկին» է, «Պետրովը» կամ «Զախարովը»:

Սա առաջինն է, ինչ մարդ պետք է գիտակցի: Սկսելով ճիշտ մտածել՝ նա հասկանում է, որ լիովին կարող է վերահսկել իր «Ուսպենսկուն», «Պետրովին» կամ «Զախարովին»: Անկախ նրանից, թե ինչ ծրագրեր ունի, ինչ է մտադիր անել կամ ասել մարդը՝ ոչ թե «նա», նրա «Ես»-ը կանեն կամ կասեն այդ, այլ «Ուսպենսկին», «Պետրովը», «Զախարովը»: Եվ իհարկե վերջիններս կանեն կամ կասեն ոչ թե այնպես, ինչպես «Ես»-ը կաներ կամ կասեր դա, այլ իրենց ուրույն ձևով՝ հաղորդելով ուրույն իմաստային նրբերանգներ, շատ հաճախ փոխելով այն, ինչ «Ես»-ը կցանկանար անել:

Այս տեսանկյունից շատ ակնհայտ վտանգ է առաջանում սեփական անձի ուսումնասիրության հենց առաջին պահից:

«Ես»-ը սկսում է սեփական անձի ուսումնասիրության գործընթացը, սակայն դրան անմիջապես գալիս են փոխարինելու «Ուսպենսկին», «Զախարովը» կամ «Պետրովը»: Սակայն «Ուսպենսկին», «Զախարովը» կամ «Պետրովը» անմիջապես աննշան փոփոխություն են ներմուծում սեփական անձի ուսումնասիրության մեջ, մի փոփոխություն, որը կարող է շատ էական չթվալ, սակայն իրականում հիմնարար ազդեցություն ունենալ ողջ գործընթացի վրա:

Եկեք ենթադրենք, օրինակ, որ Իվանով անունով մի մարդ լսում է սեփական անձի ուսումնասիրության մեթոդի նկարագրությունը: Նրան ասում են, որ մարդը պետք է տարանջատի սեփական անձը. մի կողմից «նա» կամ «Ես»-ը, մյուս կողմից՝ «Ուսպենսկին», «Պետրովը» կամ «Զախարովը»: Եվ դա *լսելուն պես՝ նա բառացիորեն* տարանջատում է իր անձը: «Սա Ես եմ», - ասում է նա, - «Իսկ սա «Ուսպենսկին», «Պետրովը» կամ «Զախարովը»: Նա երբեք չի ասի «Իվանով»-ը: Դա նրան տհաճ կթվա. հետևաբար նա անխուսափելիորեն կօգտագործի մեկ ուրիշի ազգանունը կամ անունը: Դեռ ավելին՝ նա «Ես» կհամարի այն ամենն, ինչ իրեն դուր է գալիս կամ, ամեն դեպքում, ինչ նրա կարծիքով ուժեղ է, մինչդեռ «Ուսպենսկի», «Պետրով» կամ «Զախարով» կանվանի այն, ինչ իրեն դուր չի գալիս կամ ինչ նա համարում է թույլ: Հիմնվելով սրա վրա՝ նա սկսում է ի սկզբանե իր մասին սխալ դատողություններ անել, քանի որ նա արդեն խաբել է ինքն իրեն ամենակարևոր պահին և չի ընկալել իր իրական Ես-ը. այսինքն՝ նա ընդունել է ոչ թե Իվանովին, այլ երևակայական «Ուսպենսկուն», «Պետրովին» կամ «Զախարովին»: Դժվար է նույնիսկ պատկերացնել, թե որքան հաճախ է մարդը խուսափում օգտագործել իր սեփական անունը՝ իր իսկ մասին խոսելով երրորդ դեմքից: Նա իրեն մեկ այլ անվամբ է կոչում, ինչպես հենց նոր նշված օրինակում. նա իր համար հորինված անբնական անուն է ընտրում, որով նրան երբեք չեն կոչել կամ չեն կոչի, կամ էլ ինքն իրեն պարզապես ներկայացնում է որպես «նա» և այլն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ այն մարդիկ, ովքեր սովոր են իրենց մտավոր գրույցներում ինքներն իրենց կոչելու քրիստոնյա անուններով, ազգանուններով կամ իրենց փաղաքշական անուններով, բացառություն չեն կազմում: Երբ գործը հասնում սեփական անձի ուսումնասիրությանը, նրանք նախընտրում են իրենց կոչել

«Ուսպենսկի» կամ ասել «Ուսպենսկին իմ մեջ» կարծես իր մեջ որևէ «Ուսպենսկի» կարող է լինել: Ուսպենսկու համար բավականաչափ «Ուսպենսկի» կա:

Սակայն, երբ մարդը գիտակցում է իր անօգնական լինելը ի դեմս Ուսպենսկուն, նա դադարում է անտարբեր կամ անմտահոգ վերաբերմունք ցուցաբերել դեպի սեփական անձը և իր ներսում առ «Ուսպենսկուն»:

Սեփական անձի ուսումնասիրությունը վերածվում է «Ուսպենսկու» ուսումնասիրության: Մարդը հասկանում է, որ նա «Ուսպենսկին» չէ, որ Ուսպենսկին ոչ ավելին է, քան այն դիմակը, որ նա կրում է, այն դերը, որ նա անգիտակցաբար խաղում է, որից դժբախտաբար չի կարող խուսափել, մի դեր, որը նրան իշխում է և ստիպում անել և ասել հազարավոր հիմար բաներ, ինչ իր սեփական Ես-ը երբևիցե չէր անի կամ ասի:

Եթե մարդն անկեղծ է իր հանդեպ, ապա կզգա, որ «Ուսպենսկին» իր վերահսկողության տակ է. միևնույն ժամանակ նա կզգա, որ ինքը «Ուսպենսկին» չէ:

Նա սկսում է վախենալ «Ուսպենսկուց», սկսում է զգալ, որ վերջինս իր «ախոյանն է»: Ինչ էլ, որ նա ցանկանում է անել, «Ուսպենսկին» առևանգում և փոփոխության է ենթարկում: «Ուսպենսկին» նրա «ախոյանն է»: «Ուսպենսկու» իղձերը, ճաշակը, համակրանքը, հակակրանքը, մտքերը, կարծիքները կամ հակասում են իր սեփական տեսանկյուններին, զգացմունքներին և տրամադրությանը, կամ որևէ ընդհանրություն չեն գտնում դրանց հետ: Միևնույն ժամանակ «Ուսպենսկին» նրա տերն է: Ինքը նրա ստրուկն է: Նա չունի իր սեփական կամքը: Նա իր ցանկությունները արտահայտելու որևէ միջոց չունի, քանի որ այն, ինչ նա կցանկանար անել կամ ասել նրա փոխարեն կիրագործի «Ուսպենսկին»:

Սեփական անձի ուսումնասիրության այս փուլում մարդը պետք է հասկանա, որ իր ողջ նպատակը «Ուսպենսկուց» ազատվելն է: Եվ քանի որ նա փաստացիորեն չի կարող ազատվել «Ուսպենսկուց», քանի որ դա հենց ինքն է, նա պետք է իր տիրապետության տակ վերցնի «Ուսպենսկուն» և ստիպի նրան անել ոչ թե այն, ինչ «Ուսպենսկին» է ցանկանում տվյալ պահին, այլ ինչ հենց ինքն է ցանկանում անել: Տիրոջից «Ուսպենսկին» պետք է դառնա ծառա:

Սեփական անձի վրա աշխատանքի առաջին փուլում անհրաժեշտ է որպեսզի մարդը սեփական անձը մտովի և փաստացիորեն տարանջատի և ազատի «Ուսպենսկուց»: Միևնույն ժամանակ պետք է հիշել, որ ողջ ուշադրությունը անհրաժեշտ կլինի սևեռել «Ուսպենսկու վրա», քանի որ մարդը չի կարող բացատրել, *թե նա ինքը իրականում ով է*: Փոխարենը՝ նա ինքն իրեն կարող է բացատրել, *թե ով է «Ուսպենսկին»*. սրա հետ մեկտեղ նա պետք է հիշի, որ նա «Ուսպենսկին» չէ:

Այս դեպքում ամենավտանգավորը սեփական դատողության վրա հույս դնելն է: Եթե մարդը հաջողակ է, ապա այդ պահին հնարավոր է որևէ մեկը լինի նրա կողքին, ով կկարողանար նրան հուշել, *թե որտեղ է գտնվում նա և որտեղ է «Ուսպենսկին»*: Սակայն տվյալ անձը պետք է վստահի մյուսին, քանի որ նա կարծում է, որ ինքն ամեն ինչ հասկանում է, գիտի *թե որտեղ է գտնվում ինքը և որտեղ է «Ուսպենսկին»*: Նման վերաբերմունք նա կունենա ոչ միայն իր նկատմամբ, այլ նաև մյուսների նկատմամբ՝ կարծելով, որ ճանաչում է ինչպես նրանց, այնպես էլ նրանց «Ուսպենսկիներին»: Այս ամենն իհարկե ինքնախաբեություն է: Այս փուլում մարդը որևէ պատկերացում չի կարող ունենալ ոչ իր մասին, ոչ էլ մյուսների: Որքան նա համոզված է նրանում, որ կարող է ունենալ պատկերացում, այնքան նա սխալվում է: Սակայն, եթե նա նույնիսկ չնչին չափով կարողանա անկեղծություն ցուցաբերել ինքն իր հանդեպ՝ ցանկանալով բացահայտել ճշմարտությունը, ապա կկարողանա գտնել ճշգրիտ և հուսալի հիմք, առաջին հերթին իր, իսկ այնուհետև ուրիշների մասին դատելու համար: Եվ սա իհարկե դուրսից չէ: Մարդիկ չեն գիտակցում, որ պետք է սովորել անկեղծ լինել: Նրանց թվում է, *թե անկեղծ կամ կեղծավոր լինելը կախված է նրանց ցանկությունից և որոշումից*: Սակայն ինչպես կարող է մարդը լինել ինքն իր հետ անկեղծ, երբ իրականում նա *անկեղծորեն* չի տեսնում այն, ինչ պետք է տեսնի իր ներսում: Ինչ-որ մեկը պետք է մատնանշի դա նրան: Իսկ

նրա մոտեցումը նրան ուղղորդող անձի նկատմամբ պետք է պատշաճ լինի. սա նրան թույլ կտա հասկանալ այն ինչ նրան ցույց է տրվում և ետ կպահի նրան այն մտքից, որ ինքն այդ ամենն ավելի լավ գիտի:

Աշխատանքում սա շատ կարևոր պահ է: Այն անձը, որ կորցնում է իր ուղղությունը այս պահին, երբևիցե չի գտնի այն հետագայում: Անհրաժեշտ է հիշել, որ մարդն այնպիսին, ինչպիսին որ նա է, չունի «Ես-ի» և «Ուսպենսկու» միջև եղած տարբերությունը հասկանալու կարողությունը: Նույնիսկ եթե նա փորձի, ապա ինքն իրեն կխաբի, ինչ-որ բաներ կհնարի և երբևիցե չի տեսնի իրեն այնպիսին, ինչպիսին որ նա իրականում է: Անհրաժեշտ է հասկանալ, որ առանց արտաքին օգնության, մարդը երբևիցե չի կարող ճանաչել ինքն իրեն:

Հասկանալու համար, թե ինչու է դա այդպես, դուք պետք է գլխավորապես վերհիշեք, թե ձեզ ինչ է ասվել նախկինում: Ինչպես արդեն ասվել է, սեփական անձի դիտարկումը ստիպում է մարդուն գիտակցել այն փաստը, որ նա ինքն իրեն չի հիշում: Մարդու անկարողությունը սեփական անձը հիշելու գործում իր գոյի ամենագլխավոր և ամենաբնորոշ գծերից է և իր ներսում բոլոր գործընթացների պատճառը: Սեփական անձը հիշելու անկարողությունը տարբեր ձևերով է դրսևորվում: Մարդը չի հիշում իր ընդունած որոշումները, նա չի հիշում իր կողմից իրեն տրված խոստումները, չի հիշում, թե ինչ է ասել և ինչ զգացումներ է ունեցել մի ամիս, մի օր կամ նույնիսկ մի ժամ առաջ: Նա որոշակի աշխատանք է սկսում և որոշ ժամանակ անց, արդեն չի հիշում, թե ինչու էր *սկսել* այն: Դա հատակապես տեղի է ունենում սեփական անձի վրա աշխատելիս: Մարդը կարող է հիշել ուրիշին տրված խոստումը միայն արհեստական՝ նրան *ուսուցանված* ասոցիացիաների շնորհիվ. իսկ դրանք իրենց հերթին կապված են այնպիսի գաղափարների հետ, ինչպիսիք են «պատիվը», «ազնվությունը», «պարտքը», որոնց ծագումը նույնպես արհեստական է: Ընդհանուր առմամբ խոսելիս, կարելի է ճշմարտացիորեն ասել, որ եթե մարդը մի բան հիշում է, նա փոխարենը մոռանում է իր համար շատ ավելի կարևոր տասը կամ ավելի բաներ: Մարդը հատկապես հեշտությամբ է մոռանում այն, ինչ վերաբերում է իրեն՝ այն սեփական «մտավոր նկարները», որոնք նա լուսանկարել է անցյալում:

Եվ սա մարդու հայացքները զրկում է ամեն տեսակի կայունությունից ու հստակությունից: Մարդը չի հիշում, թե ինչի մասին է խորհել, ինչ է ասել, *ինչպես* է խորհել կամ *ինչպես* խոսել:

Սա իր հերթին կապված է իր սեփական անձի և շրջակա միջավայրի հանդեպ մարդու կողմից ցուցաբերած հիմնական մոտեցումից: Այն է՝ նա շարունակ իրեն «նույնացնում է» սովյալ պահին իր ուշադրությունը, մտքերը, ցանկությունները և երևակայությունը գրաված իրերի և երևույթների հետ:

«Նույնացումը» այնքան տարածված հատկանիշ է, որ դիտարկման նպատակներով այն դժվար է ամեն ինչից տարանջատել: Մարդը միշտ նույնացման հոգեվիճակում է, պարզապես նույնացման օբյեկտն է փոխվում:

Մարդը նույնացնում է իրեն իր առջև ծառացած խնդրների հետ և ամբողջովին մոռանում է այն վեհ նպատակները, որոնցով նա սկսել էր իր աշխատանքը: Նա նույնացնում է իրեն մի մտքի հետ և մոռանում մյուսները: Նա նույնացնում է իրեն մի զգացմունքի, տրամադրության հետ և մոռանում է իր խորունկ մտքերը, զգացմունքները և հոգեվիճակները: Իր վրա աշխատելիս՝ մարդն այնքան է տարվում առանձին նպատակներով, որ դադարում է ծառերից այն կողմ տեսնել անտառը: Նա երևակայում է, թե նրան մոտ գտնվող երկու կամ երեք ծառերը մի ամբողջ անտառ է:

«Նույնացումը» մեր թշնամիներից ամենաոխերիմն է, քանի որ այն ներթափանցում է ամենուր և խաբում մարդուն այն պահին, երբ զգում է, որ նրա դեմ պայքար է մղվում: Մարդու համար չափազանց դժվար է ազատվել նույնացումից, քանի որ նա իրեն հեշտությամբ նույնացնում է իրեն ամենաշատը դուր եկած երևույթների հետ, որոնց սովորաբար ժամանակ,



աշխատանք և ուշադրություն է տրամադրում: Նույնացումից ազատվելու համար մարդը պետք է մշտապես զգոն մնա և իր հանդեպ լինի անողորմ, այսինքն՝ նա չպետք է վախենա նույնացման աննկատ և սղոսկված ձևերը տարորոշելուց:

Անհրաժեշտ է որպեսզի մարդն իր ներսում տեսնի և ուսումնասիրի նույնացման արմատները: Նույնացման դեմ պայքարը դժվարանում է հատկապես այն ժամանակ, երբ մարդիկ նկատելով դա իրենց ներսում՝ համարում են այն շատ դրական բնորոշ գիծ՝ կոչելով այն «խանդավառություն», «եռանդ», «կիրք», «անմիջականություն», «ոգեշնչում» և նմանատիպ անվանումներ. նրանք հավատում են, որ միայն նման հոգեվիճակում կարող են իրականում լավ աշխատանք կատարել՝ անկախ բնագավառից: Իրականում սա իհարկե խաբկանք է: Մարդը որևէ խելամիտ բան չի կարող անել նույնացման հոգեվիճակում: Եթե մարդիկ կարողանային տեսնել, թե նույնացման հոգեվիճակն իրենից ինչ է ներկայացնում, ապա կփոխեին իրենց կարծիքը: Մարդը վերածվում է առարկայի, մսակտորի. նա կորցնում է մարդկային էակին բնորոշ նույնիսկ ամենաչնչին նմանությունը: Արևելքում, որտեղ մարդիկ հաշիշ կամ այլ թմրանյութեր են ծխում, հաճախ մարդն այնքան է նույնացվում իր ծխամորձի հետ, որ սկսում է ինքն իրեն ծխամորձի տեղ դնել: Սա կատակ չէ, այլ՝ փաստ: Նա իրականում վերածվում է ծխամորձի: Սա նույնացում է: Եվ սրա համար հաշիշը կամ օպիումը բոլորովին էլ անհրաժեշտ պայման չեն: Ապա նայեք խանութներում, թատրոններում, ռեստորաններում գտնվող մարդկանց, տեսեք, թե ինչպես են որևէ թեմայի շուրջ բանավիճելիս նույնացնում սեփական անձը իրենց խոսքերի հետ, կամ ինչպես են փորձում որևէ բան ապացուցել, մասնավորապես մի բան, որից իրենք էլ նույնիսկ տեղյակ չեն: Նրանք ձեռք են բերում ազահուության, ցանկությունների կամ *բառերի* կերպարանք, նրանցից ոչինչ չի մնում:

Նույնացումը սեփական անձի հիշողության համար խոչընդոտ է: Այն մարդը, որ իրեն նույնացնում է ցանկացած բանի հետ, չի կարող հիշել ինքն իրեն: Սեփական անձը հիշելու համար անհրաժեշտ է առաջին հերթին *չնույնացնել* այն որևէ բանի հետ: Սակայն դա սովորելու համար, մարդն առաջին հերթին *չպետք է նույնացնի իրեն իր սեփական անձի հետ*, չպետք է միշտ և բոլոր առիթներով իրեն կոչի «Ես»: Նա պետք է հիշի, որ նրանում երկուսն են, որ մեկը *նա ինքն* է՝ նրա «Ես»-ը, իսկ մյուսը՝ *ուրիշը*, որի հետ նա պետք է պայքարի և հաղթանակ տանի, եթե ցանկանում է երբևիցե որևէ ձեռքբերումներ ունենա: Քանի դեռ մարդը նույնացնում է կամ նույնացվում է, նա բոլոր պատահարների ստրուկն է: Ազատությունն, առաջին հերթին, ազատումն է նույնացումից:

Նույնացման ընդհանուր ձևերից հետո ուշադրությունը պետք է սևեռել նույնացման առանձնահատուկ մի ձևի, այն է՝ մարդկանց հետ նույնացվելուն, որը դրսևորվում է նրանց հետ «հաշվի նստելու» միջոցով:

Մարդկանց հետ «հաշվի նստելու» մի քանի ձև կա:

Ամենագերակշռող դեպքերում մարդն իրեն նույնացնում է իր մասին մարդկանց ունեցած կարծիքների, իր հանդեպ նրանց կողմից ցուցաբերած վարմունքի, մոտեցման հետ: Նա միշտ կարծում է, որ մարդիկ իրեն բավարար չեն գնահատում, որ բավական քաղաքավարի և բարեկիրթ չեն: Այս ամենը նրան մտատանջում է, ստիպում է մտածել, կասկածել և վատնել մեծ քանակությամբ էներգիա վարկածների և ենթադրությունների վրա՝ նրա մոտ զարգացնելով թերահավատ և թշնամական վերաբերմունք մարդկանց նկատմամբ: Թե ինչպես ինչ-որ մեկը նայեց նրան, թե ինչ մտածեց և ինչ ասեց նրա մասին. այս ամենը նրա համար հսկայական նշանակություն է ձեռք բերում:

Եվ նա «հաշվի է նստում» ոչ միայն առանձին մարդկանց հետ, այլ հասարակության և պատմականորեն ձևավորված պայմանների հետ: Այն ամենն ինչ դժգոհություն է պատճառում տվյալ մարդուն, անարդար է թվում, անօրինական, սխալ և անտրամաբանական: Տվյալ մարդու դատողությունը միշտ հանգեցնում է նրան այն եզրակացության, որ նման երևույթները կարելի է և անհրաժեշտ է փոխել: «Անարդարություն»-ը այն բառերից մեկն է, որում շատ հաճախ

թաքնված է նույնացման երևույթը: Երբ մարդն իրեն համոզում է, որ զայրացել է ինչ-որ անարդարության պատճառով, ապա նրա համար որևէ բանի հետ այլևս հաշվի չնստել կնշանակի «անարդարության հետ համակերպվել»:

Կան մարդիկ, ովքեր հաշվի են նստում ոչ միայն անարդարության հետ կամ անարդարության արժեքը բավարար չգնահատելու հետ, այլ նաև եղանակի հետ: Մազավեշտալի է թվում, բայց փաստ է: Մարդիկ հաշվի են նստում կլիմայի, տաքության, ցրտի, ձյան, անձրևի հետ: Նրանց կարող է եղանակը նյարդայնացնել, զայրացնել և վրդովել: Մարդը կարող է այնքան անձնական ընդունել ամեն ինչ, կարծես ամեն բան աշխարհում հատուկ ստեղծված լինի՝ նրան հաճույք կամ հակառակը տհաճություն և նեղություն պատճառելու համար:

Այս ամենը և շատ ուրիշ բաներ պարզապես նույնացման հետևանք է: Նման հաշվի նստելը ամբողջովին հիմնված է «պահանջների» վրա: Մարդը ներքուստ «պահանջում» է, որ բոլորը տեսնեն, թե որքան հիանալի մարդ է նա. նրա մոտ անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի մարդկիկ նրա հանդեպ անընդհատ հարգանք, ակնածանք և հիացմունք տաճեն, ինչպես նաև իր ինտելեկտի, գեղեցկության, խելամտության, ճարտարամտության, բանականության առկայության, իր յուրօրինակության և բոլոր այլ հատկանիշների նկատմամբ: Պահանջներն իրենց հերթին հիմնված են սեփական անձի մասին ամբողջովին երևակայական գաղափարի վրա, որը շատ հաճախ պատահում է արտաքուստ շատ համեստ թվացող մարդկանց հետ: Մի շարք գրողներ, դերասաններ, երաժիշտներ, նկարիչներ և քաղաքական գործիչներ, օրինակի համար, գրեթե անխտիր հիվանդ մարդիկ են: Եվ ինչից են նրանք տառապում: Առաջին հերթին՝ իրենց սեփական անձի մասին արտասովոր կարծիք ունենալուց, այնուհետև «պահանջներից», այնուհետև «ուրիշների հետ հաշվի նստելուց». այսինքն՝ նրանք ի սկզբանե պատրաստ են վիրավորվել նրանից, որ իրենց չեն հասկանում և չեն գնահատում:

Հաշվի նստելու ևս մեկ ձև կա, ինչը մարդուց մեծ էներգիա կարող է խլել: Այս ձևը սկսում է կազմավորվել այն ժամանակ, երբ մարդը սկսում է կարծել, *թե մյուս մարդու հետ բավականաչափ հաշվի չի նստում*, որ այս մյուս անձը նրանից վիրավորված է, քանի որ առաջինը բավարար չափով հաշվի չի նստում նրա հետ: Նա կարծում է, որ միգուցե իսկապես բավականաչափ մյուս մարդու մասին չի մտածում, բավարար ուշադրություն չի տրամադրում նրան: Այս ամենը պարզապես թուլության նշան է: Մարդիկ միմյանցից վախենում են: Սակայն սա շատ հեռուն կարող է տանել: Ես նման շատ դեպքերի եմ ականատես եղել: Այսկերպ մարդը կարող է վերջնականապես կորցնել իր հավասարակշռությունը, եթե երբևիցե ունեցել է այն, որը նրան կմղի անխոհեմ գործողությունների: Նա ինքն իր վրա զայրանում է, զգում է, որ դա անհեթեթություն է, բայց չի կարողանում վերջ տալ դրան, մինչդեռ նման դեպքերում ամբողջ իմաստը «ուրիշների հետ հաշվի չնստելու մեջ է»:

Իրադրությունը շատ ավելի վատ է, երբ մարդը կարծում է, թե «պետք է» անի որևէ բան, մինչդեռ իրականում նա բոլորովին էլ չպետք է անի դա: «Պետք է», «չպետք է»՝ բավական բարդ թեմա է. դժվար է հասկանալ, թե, երբ մարդն իսկապես «պետք» է, իսկ երբ «չպետք է»: Մրան կարելի է մոտենալ միայն «նպատակի» տեսանկյունից: Երբ մարդն ունի նպատակ, նա «պետք է» անի միայն այն ինչ նրան տանում է դեպի իր նպատակը և «չպետք է» անի այն, ինչ նրան կարող է շեղել իր նպատակի ուղղությունից:

Ինչպես արդեն ասեցի, մարդիկ շատ հաճախ կարծում են, որ եթե սկսեն ներքուստ պայքարել հաշվի նստելու հետ, ապա դա նրանց կդարձնի «կեղծավոր». նրանք վախենում են դրանից, քանի որ կարծում են, թե կարող են ինչ-որ մի բան կորցնել՝ իրենց մի մասը: Այս դեպքում տեղի է ունենում այն, ինչ տեղի է ունենում տհաճ զգացմունքների արտահայտման դեմ պայքար մղելիս: Միակ տարբերությունն այն է, որ մի դեպքում մարդը պայքար է մղում զգացմունքների արտաքին դրսևորման դեմ, իսկ մյուս դեպքում՝ միգուցե միևնույն զգացմունքների ներքին դրսևորման դեմ:

Անկեղծությունը կորցնելու վախը իհարկե ինքնախաբեություն է, խաբելու բանաձևերից մեկը, որի վրա հիմնված են մարդկային թուլությունները: Մարդը ներքուստ չի կարող դադարեցնել նույնացման և հաշվի նստելու գործընթացները, նա չի կարող նաև չարտահայտել իր բացասական զգացմունքները, միայն այն պատճառով, որ նա թույլ է: Նույնացումը, հաշվի նստելը, տհաճ զգացմունքների արտահայտումը մարդու թուլության, անզորության, սեփական անձը վերահսկելու անկարողության դրսևորումներն են: Չցանկանալով ընդունել իր թուլությունը՝ մարդն այն կոչում է «անկեղծություն» կամ «ազնվություն» և իրեն հայտարարում է, որ չի ցանկանում պայքար մղել անկեղծության դեմ, մինչդեռ իրականում նա չի կարող պայքարել իր սեփական թուլությունների դեմ:

Անկեղծությունը և ազնվությունը իրականում շատ ուրիշ գաղափարներ են: Այն ինչ մարդն այս դեպքում կոչում է «անկեղծություն» իրականում պարզապես իրեն զսպելու ցանկության բացակայությունն է: Եվ իր հոգու խորքում մարդուն սա հայտնի է: Սակայն նա ինքն իրեն խաբում է՝ ասելով, թե չի ցանկանում կորցնել իր անկեղծությունը:

Մինչ այժմ ես խոսել եմ ներքին նկատառման մասին: Հնարավոր է ավելի շատ օրինակներ բերել: Սակայն դուք դա ինքներդ պետք է անեք, այն է՝ դուք ինքներդ պետք է փնտրեք և գտնեք դրանք, ձեր սեփական անձը և ուրիշներին դիտարկելիս:

Ներքին նկատառման հակադրությունն է արտաքին նկատառումը, որը մասամբ առաջինի դեմ պայքար մղելու միջոց է: Արտաքին նկատառումը ի տարբերություն ներքին նկատառման մարդկանց հանդեպ բացարձակապես մեկ այլ հարաբերության վրա է հիմնված: Դա հարմարեցումն է մարդկանց, նրանց պատկերացումներին և պահանջներին: Արտաքին նկատառումը հեշտացնում է ինչպես այլ մարդկանց, այնպես էլ տվյալ մարդու կյանքը: Արտաքին նկատառումը պահանջում է գիտելիքներ մարդկանց, նրանց ճաշակի, սովորությունների և կանխակալությունների մասին: Միննույն ժամանակ, արտաքին նկատառումը մեծ ուժ է պահանջում տվյալ անձից՝ իր հնադեպ ուժեղ վերահսկողության դրսևորում: Շատ հաճախ մարդը ցանկանում է *անկեղծորեն* արտահայտել և ցույց տալ մեկ ուրիշին, թե իրականում ինչ է կարծում կամ զգում նրա հանդեպ: Եվ եթե նա թույլ մարդ է, ապա նա կիրականացնի այդ ցանկությունը, իսկ այնուհետև կարդարացնի իրեն՝ ասելով, թե չէր ցանկանում խաբել, ձևանալ, այլ ցանկանում էր անկեղծ լինել: Այնուհետև նա համոզում է ինքն իրեն, որ դա մյուս մարդու մեղքով էր: Նա իսկապես ցանկանում էր հաշվի առնել նրան, տեղ տալ նրան, չվիճել նրա հետ և այլն: Սակայն *մյուս մարդը* որևէ ցանկություն չունեք հաշվի նստել նրա հետ, այնպես որ որևէ բան հնարավոր չէր անել: Շատ հաճախ պատահում է, որ մարդը սկսում է օրհնանքով, բայց վերջացնում՝ անեծքով: Նա որոշում է հաշվի չառնել ուրիշներին, իսկ այնուհետև մեղադրում մյուսներին՝ իրեն հաշվի չառնելու համար: Սա մի օրինակ է, թե ինչպես է արտաքին նկատառումը վերածվում ներքինի: Սակայն, եթե մարդն իրականում հիշի իր սեփական անձը, նա կհասկանա, որ մյուս մարդը իր ~~ս~~ նման մի մեքենա է: Այնուհետև նա *կմտնի տվյալ մարդու դրություն մեջ* և իսկապես կհասկանա և կզգա, թե ինչ է մյուս մարդը մտածում և զգում: Եթե նա կարողանա անել դա, իր աշխատանքը ավելի կհեշտանա: Սակայն, եթե նա մարդուն ներկայացնի իր սեփական պահանջները, ոչինչ բացի ներքին նկատառումից հնարավոր չի լինի ձեռք բերել:

Ճիշտ արտաքին նկատառումը շատ կարևոր է աշխատանքի ընթացքում: Հաճախ պատահում է մարդիկ, ովքեր շատ լավ գիտակցում են կյանքում արտաքին նկատառման անհրաժեշտությունը, չեն հասկանում դրա կարևորությունը աշխատանքում: Նրանք որոշում են, որ քանի որ աշխատում են, ապա իրավունք ունեն հաշվի չնստել: Մինչդեռ իրականում, աշխատանքում հաջողության հասնելու համար նկատառումը մարդուն տասն անգամ ավելի անհրաժեշտ է, քան առօրյա կյանքում, քանի որ *միայն* արտաքին նկատառումը կարող է ցույց տալ, թե որքանով է տվյալ անձը գնահատում և ըմբռնում աշխատանքը: Իսկ աշխատանքում

հաջողությունը միշտ համամասնական է աշխատանքի արժեքավորմանը և հասկացողությանը: Հիշեք, որ աշխատանքը չի կարող սկսել և շարունակվել *օբիվատելի* մակարդակից ավելի ցածր մակարդակում, այն է՝ առօրեական կյանքից ավելի ցածր մակարդակում: Սա շատ կարևոր սկզբունք է, որն այս կամ այն պատճառով շատ հեշտությամբ մոռացվում է: Սակայն մենք ավելի ուշ առանձին կխոսենք այդ մասին:

Գ.-ն իր հաջորդ գրույցներից մեկը սկսեց այն փաստից, որ մենք մոռանում ենք մեր դրության ծանրության մասին:

- Դուք շատ հաճախ միամիտ ձևով եք մտածում, - ասեց նա: Դուք կարծում եք, որ արդեն կարող եք որևէ բան *անել*: Այս համոզմունքից ձերբազատվելը ամենադժվ գործն է մարդու համար: Դուք չեք պատկերացնում ձեր կազմակերպվածության բարդության աստիճանը, չեք պատկերացնում նաև, որ յուրաքանչյուր ջանք, բացի ձեռք բերված ցանկալի արդյունքներից, հանգեցնում է հազարավոր անսպասելի և շատ հաճախ անցանկալի արդյունքների. իսկ ամենագլխավորը՝ դուք մոռանում եք, որ այն մեքենան, որի հետ դուք աշխատում եք նախ և առաջ մաքուր և նոր մեքենայի չէ: Ձեզ հետապնդում են անցած կյանքի զանցալի և հիմար տարիները, որտեղ դուք տրվել եք ամեն տեսակի թուլությունների, փակել ձեր աչքերը ձեր արած սխալների վրա, փորձել խուսափել ոչ հաճելի ճշմարտությունից, մշտապես խաբել և արդարացրել ինքներդ ձեզ, մեղադրել ուրիշներին և այլն, և այլն: Այս ամենը չի կարող չթողնել իր ազդեցությունը ձեր մեքենայի վրա: Մեքենան կեղտոտ է, տեղ-տեղ նույնիսկ ժանգոտած, իսկ որոշ մասերում էլ արհեստական սարքեր են ձևավորվել, որի անհրաժեշտությունը առաջացել է սխալ աշխատանքի արդյունքում:

Այս արհեստական սարքերը այժմ խանգարելու են ձեր բոլոր բարի մտադրություններին: Դրանք կոչվում են «բուֆերներ»: «Բուֆերը» մի տերմին է, որը բացատրության կարիք ունի: Մենք գիտենք, թե երկաթուղային վագոնների բուֆերները որոնք են: Դրանք այն սարքերն են, որոնք թուլացնում են բախումները, երբ վագոնները կամ բեռնատարները բախվում են միմյանց: Եթե չլինեին բուֆերները, մի վագոնի բախումը մյուսին կլիներ շատ տհաճ և վտանգավոր: Բուֆերները թուլացնում են այս բախումների հետևանքները՝ դարձնելով դրանք աննկատելի կամ աննշմարելի:

Մարդու ներսում կան նույնատիպ սարքեր: Դրանք բնածին չեն, այլ ստեղծված են մարդու կողմից, չնայած՝ ակամայից: Դրանց ձևավորման պատճառը մարդու մոտ մի շարք հակասությունների առկայությունն է. հակասություններ կարծիքներում, զգացմունքներում, նախասիրություններում, խոսքերում և գործողություններում: Եթե մարդն իր ողջ կյանքում զգար իր ներսում առկա բոլոր հակասությունները, նա չէր կարողանա ապրել և գործել նույն հանգստությամբ, ինչպես ապրում և գործում է այժմ: Նա իր ներսում կունենար մշտական տարաձայնություններ և մտատանջություններ: Մենք չենք տեսնում, թե որքան հակասական և թշնամական են մեր անհատականության տարբեր «Ես»-երը միմյանց նկատմամբ: Եթե մարդը զգար բոլոր այս հակասությունները, նա իսկապես կզգար, *թե իրականում նա ով է*: Նա կզգար, որ խելագարվում է: Որևէ մեկին հաճելի չէ զգալ, որ ինքը խելագարվում է: Դեռ ավելին՝ նման միտքը մարդուն զրկում է ինքնավստահությունից, թուլացնում է նրա էներգիան, զրկում հարգանքից սեփական անձի նկատմամբ: Նա ինչ-որ ձևով պետք է յուրացնի այս միտքը կամ վանի այն: Նա պետք է կամ ոչնչացնի այդ հակասությունները կամ դադարի տեսնել ու զգալ դրանք: Մարդը չի կարող ոչնչացնել հակասությունները: Սակայն, եթե նրա ներսում ստեղծվեն «բուֆերներ», ապա նա կդադարի զգալ դրանք: Նա այլևս չի զգա հակասական կարծիքների, զգացմունքների, խոսքերի բախում:

Բուֆերները ստեղծվում են դանդաղ և աստիճանաբար: Շատ «բուֆերներ» ստեղծվում են արհեստականորեն՝ «կրթության» միջոցով: Մյուսները ստեղծվում են մեզ շրջաատող կյանքի հիպնոտիկ ազդեցության տակ: Մենք շրջապատված ենք մարդկանցով, ովքեր ապրում,

խոսում, մտածում և զգում են «բուֆերների» օգնությամբ: Ընդօրինակելով նրանց կարծիքները, գործողությունները և խոսքերը՝ մադրը ակամայից նմանատիպ «բուֆերներ» է ստեղծում իր ներսում: «Բուֆերները» մարդու կյանքը ավելի են հեշտացնում: Շատ բարդ կլիներ ապրել առանց «բուֆերների»: Սակայն դրանք մարդուն ետ են պահում ներքին զարգացումից, քանի որ «բուֆերները» ստեղծված են բախումները թուլացնելու համար, մինչդեռ միայն բախումները կարող են հանել մարդուն իր ներկայիս կյանքի վիճակից. այսինքն, միայն դրանք կարող են նրան արթնացնել: «Բուֆերները» մարդուն օրոքելով քնացնում են, հաղորդում նրան հաճելի և խաղաղ զգացողություն, որ ամեն ինչ լավ կլինի, որ որևէ հակասություն չկան և որ նա կարող է ապրել խաղաղության մեջ: *«Բուֆերները» այնպիսի սարքեր են, որոնց միջոցով մարդը կարող է միշտ ճիշտ դուրս գալ: «Բուֆերները» թույլ են տալիս մարդուն չունենալ խղճի զգացում:*

Խիղճը նույնպես մի տերմին է, որն ունի բացատրության կարիք: Առօրյա կյանքում «խղճի» գաղափարը շատ պարզեցված է. կարծես, թե ունենք խիղճ: Իրականում զգացմունքների մակարդակում «խիղճ» հասկացությունը համարժեք է բանականության մակարդակի «գիտակցությանը»: Իսկ մենք քանի որ չունենք գիտակցություն, չունենք նաև խիղճ:

*Գիտակցությունը* մի վիճակ է, որում մարդը *միանգամից գիտակցում է այն ամենն, ինչի մասին գիտի ընդհանրապես*, գիտակցում է, թե որքան քիչ գիտի և որքան հակասություններ են պարունակում իր գիտելիքները:

*Խիղճը* մի վիճակ է, որում մարդը զգում է միանգամից այն ամենն, ինչ սովորաբար զգում է կամ կարող է զգալ: Եվ քանի որ մարդն իր ներսում ունի հազարավոր հակասական զգացմունքներ, այդ թվում այնպիսի տարաբնույթ զգացմունքներ, ինչպիսիք են սեփական անձի ոչնչության քողարկված գիտակցումը, վախը, ամենահիմար ինքնահավանությունը, ինքնավստահությունը, ինքնագոհունակությունը և ինքնագովեստը, այս *ամենի* գիտակցումը ոչ միայն ցավ կպատճառի նրան, այլ պարզապես անտանելի կդառնա:

Եթե մարդը, ում ողջ ներքին աշխարհը բաղկացած է հակասություններից հանկարծ իր ներսում միաժամանակ զգար բոլոր այս հակասությունները, եթե նա միանգամից զգար, որ սիրում է այն ամենն ինչ աստում է և աստում է այն ամենն, ինչ սիրում է, որ նա խաբում է ստելիս, և ճշմարտությունն է ասում, երբ խաբում է, և եթե կարողանար զգալ այդ ամենի ամոթը և սարսափը, ապա նա ձեռք կբերեր այն հոգեվիճակը, որը կոչվում է «խիղճ»: Մարդը չի կարող ապրել այս հոգեվիճակում. նա կամ պետք է ազատվի հակասություններից կամ խղճից: Նա չի կարող ազատվել խղճից, սակայն, եթե նա չի կարող անել դա, ապա կարող է քնացնել այն, այսինքն՝ նա կարող է աններթափանցելի արգելապատերի միջոցով տարանջատել սեփական անձի մի զգացողությունը մյուսից, երբևիցե չտեսնել դրանց միասին, երբևիցե չտեսնել դրանց անհամատեղելիությունը և դրանց համագոյակցության անհերթելիությունը:

Սակայն բարեբախտաբար մարդու համար, այսինքն՝ նրա խաղաղության և հանգիստ քնի համար, խղճի նման զգացողությունը շատ հազվադեպ է: Վաղ մանկությունից «բուֆերները» սկսում են աճել և արմատներ գցել մարդու ներսում՝ հնարավորություն չընձեռելով նրան տեսնել իր ներքին հակասությունները: Այդ պատճառով էլ անսպասելի զարթոնքի վտանգը նրան չի սպառնում: Զարթոնքը հնարավոր է միայն այն մարդկանց համար, ովքեր փնտրում և ցանկանում են այն, նրանց համար, ովքեր պատրաստ են պայքարել ինքներն իրենց դեմ, իրենց վրա բավականին երկար և համառ աշխատանք տանել այն ձեռք բերելու համար: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ոչնչացնել «բուֆերները», այսինքն՝ դեմ առ դեմ կանգնել բոլոր այն ներքին տառապանքներին, որոնք կապված են հակասությունների զգացողության հետ: Դեռ ավելին՝ «բուֆերների» ոչնչացումը երկարատև աշխատանք է պահանջում, և մարդը պետք է համաձայնի այս աշխատանքին՝ գիտակցելով, որ իր աշխատանքի արդյունքը նրան ամեն տեսակի անհանգստություն և տանջանք կարող է պատճառել, արթնացնելով նրա խիղճը:

Սակայն գիտակցությունը այն բոցն է, որն արդեն նշված ապակե թորանոթում կարող է միաձուլել բոլոր մետաղափոշիները՝ ստեղծելով այն միասնություն, որը բացակայում է մարդու մոտ սեփական անձի ուսումնասիրության սկզբում:

«Խղճի» գաղափարը որևէ ընդհանրություն չունի «բարոյականություն» գաղափարի հետ: Խիղճը համընդհանուր և *մշտական* երևույթ է: Այն նույնն է բոլոր մարդկանց համար և հնարավոր՝ միայն «բուֆերների» բացակայության դեպքում: Հաշվի առնելով մարդկանց տարբեր կատեգորիաները՝ կարող ենք ասել, որ գոյություն ունի մարդու խիղճ, որում չկա որևէ հակասություն:

Նման խիղճը չի տառապում. ընդհակառակը՝ այն պատճառում է մեկ այլ տեսակի բերկրանք, որը մենք ընդունակ չենք ըմբռնելու: Սակայն խղճի նույնիսկ վայրկյանական զարթոնքը հազարավոր տարբեր Ես-եր ունեցող մարդու մոտ կարող է տառապանք պատճառել: Եվ եթե խղճի պահերը ավելի շարունակական դառնան և մարդը դրանցից չվախենա, այլ ընդհակառակը՝ համագործակցի դրանց հետ և փորձի նրանց պահպանել, այդ պահերի մեջ են աստիճանաբար ներթափանցում բերկրանքի շատ նուրբ տարրեր, որոնք հետագայում կփոխակերպվեն «մաքուր խղճի» զգացողության:

«Բարոյականություն» գաղափարի մեջ որևէ ընդհանրական բան չկա: Բարոյականությունը բաղկացած է բուֆերներից: Գոյություն չունի համընդհանուր բարոյականություն: Այն ինչ բարոյական է Չինաստանում, անբարոյական է Եվրոպայում, իսկ այն ինչ բարոյական է Եվրոպայում՝ անբարոյական է Չինաստանում:

Այն ինչ բարոյական է Պետերբուրգում, անբարոյական է Կովկասում: Իսկ այն ինչ բարոյական է Կովկասում, անբարոյական է Պետերբուրգում: Այն ինչ բարոյական է հասարակության մի դասի մոտ, անբարոյական է մյուսի մոտ, և ընդհակառակը: Բարոյականությունը միշտ և ամենուր արհեստական երևույթ է: Այն բաղկացած է տարբեր «տարրերից», այսինքն՝ սահմանափակումներից և բազմազան պահանջներից, որոնց հիմքում երբեմն ընկած է բանականությունը. որոշ դեպքերում էլ դրանք զրկվում են իրենց իմաստից կամ երբևիցե իմաստ ունեցած չեն լինում, ստեղծված են լինում կեղծ հիմքի, կանխակալության և կեղծ վախի վրա:

Բարոյականությունը բաղկացած է «բուֆերներից»: Եվ քանի որ «բուֆերները» տարբեր են ու տարբերվում են նաև կյանքի պայմանները տարբեր երկրներում, տարիքներում կամ հասարակության շերտերում, հետևաբար նրանց կողմից ստեղծված բարոյականության չափանիշները նույնպես տարբեր են և հակասական: Բոլորին հատուկ բարոյականություն գոյություն չունի: Նույնիսկ անհնարիք է ասել, արդյոք գոյություն ունի բարոյականության ընդհանուր գաղափար, օրինակ, Եվրոպայում: Երբեմն ասում են, թե Եվրոպայի համընդհանուր բարոյականությունը «քրիստոնեական բարոյականությունն է»: Սակայն առաջին հերթին, ինքը՝ «քրիստոնեական բարոյականության» գաղափարը, ենթարկվում է բազմազան մեկնաբանությունների. շատ հանցանքեր արդարացվել են «քրիստոնեական գաղափարախոսության» միջոցով: Եվ երկրորդը՝ ժամանակակից Եվրոպան շատ քիչ ընդհանրություն ունի «քրիստոնեական բարոյականության» հետ, անկախ նրանից, թե մենք ինչպես ենք հասկանում այդ բարոյականությունը:

Ամեն դեպքում, եթե «քրիստոնեական բարոյականությունը» կարողացավ Եվրոպային հանգեցնել պատերազմի, որն այժմ շարունակվում է, ապա ավելի լավ կլիներ հնարավորինս խուսափել նման բարոյականությունից:

- Շատ մարդիկ հայտարարում են, որ չեն հասկանում ձեր ուսմունքի բարոյական կողմը, - ասեց մեզանից մեկը: - Մյուսները ասում են, որ ձեր ուսմունքը բարոյականությունից զուրկ է ամբողջովին:

- Իհարկե ոչ, - ասեց Գ.-ն: Մարդկանց դուր է գալիս բարոյականությունից խոսել: Սակայն բարոյականությունը պարզապես ինքնաներշնչանք է: *Այն ինչ իրականում անհրաժեշտ է խիղճն է:*

Մենք բարոյականություն չենք քարոզում: Մենք ուսուցանում ենք, թե ինչպես վերգտնել խիղճը: Մարդկանց չի գոհացնում սրա մասին լսելը: Ասում են, թե մենք չունենք *սեք*: Եվ դա այն պարզ պատճառով է, որ մենք չենք քաջալերում թուլությունն ու կեղծ բարեպաշտությունը, այլ փոխարենը հանում ենք բոլոր դիմակները: Նա, ով ցանկանում է ձեռք բերել ճշմարտությունը սիրո մասին կամ Քրիստոնեությունից չի խոսի, քանի որ նա գիտի, թե որքան հեռու է գտնվում այդ ամենից: Քրիստոնեական ուսմունքը քրիստոնյաների համար է: Եվ քրիստոնյաներն այն մարդիկ են, ովքեր ապրում և գործում են քրիստոնեական պատվիրաններին համաձայն: Կարո՞ղ են արդյոք այն մարդիկ, ովքեր խոսում են սիրուց և բարոյականությունից ապրել քրիստոնեական պատվիրաններին համաձայն: Իհարկե չեն կարող: Սակայն միշտ էլ նման խոսակցություններ կլինեն, կլինեն մարդիկ ում համար խոսքերը ավելի արժեքավոր կլինեն, քան որևէ այլ բան: Սակայն սա է իրականությունը: Այն մարդը, ով սիրում է նման կերպ խոսել, դատարկ մարդ է. անիմաստ է նման մարդու վրա ժամանակ վատնելը:

Բարոյականությունը և խիղճը բավականին տարբեր գաղափարներ են: Մի խիղճը երբևիցե չի կարող հակասել մեկ այլ խղճի: Մի տեսակի բարոյականությունը միշտ շատ հեշտությամբ կարող է հակասել և ամբողջովին ժխտել մյուսը: «Բուֆերներով» մարդը կարող է շատ բարոյական լինել, իսկ «բուֆերները» կարող են շատ տարբեր լինել. այն է՝ երկու շատ բարոյական մարդ կարող է մեկը մյուսին շատ անբարոյական համարել: Որպես կանոն դա անխուսափելիորեն այդպես է: Որքան «բարոյական» է մարդը, այնքան ավելի «անբարոյական» է համարում նա մյուս մարդկանց:

Բարոյականության գաղափարը կապված է բարի և չար վարքի հետ: Սակայն բարու և չարի գաղափարները միշտ տարբեր են տարբեր մարդկանց համար, միշտ սուբյեկտիվ են մարդ համար մեկի, համար երկուսի և համար երեքի համար՝ կախված տվյալ պահից կամ իրավիճակից: Սուբյեկտիվ մարդը չի կարող ունենալ բարու և չարի ընդհանուր գաղափար: Սուբյեկտիվ մարդու համար չարիք է այն ամենը, ինչ հակադիր է իր ցանկություններին, հետաքրքրություններին կամ բարու մասին իր ունեցած գաղափարներին:

Կարելի է ասել, որ չարիք բացարձակապես գոյություն չունի սուբյեկտիվ մարդու համար, որ գոյություն ունեն միայն բարու մասին տարբեր պատկերացումներ: *Որևէ մեկը երբևիցե միտումնավոր՝ չարիքի շահերից ելնելով կամ հանուն չարիքի չի գործում:* Բոլորը, ըստ իրենց պատկերացումների, գործում են բարի մտադրություններից ելնելով: Սակայն բոլորն էլ ունեն տարբեր պատկերացումներ: Արդյունքում մարդիկ կոտորում, խեղդում և սպանում են միմյանց՝ *հանուն բարու:*

Պատճառը կրկին նույնն է՝ մարդկանց տգիտությունը և այն խորը քունը, որում նրանք գտնվում են:

Սա այնքան ակնհայտ է, որ նույնիսկ տարօրինակ է թվում, թե ինչու մարդիկ երբևիցե դրա մասին չեն մտածել: Սակայն փաստը մնում է փաստ, որ նրանք շարունակում են չհասկանալ այդ ամենը և յուրաքանչյուրը շարունակում է կարծել է, թե *իր պատկերացրած բարին* միակ գոյություն ունեցող բարին է, իսկ մնացած ամեն ինչ չարիք է: Միամիտ կլինել և անիմաստ մեր կողմից հուսալ, որ մարդիկ երբևիցե կհասկանան սա և որ կկատարանան մշակել բարու համընդհանուր և նույնական գաղափար:

- Սակայ՞ն, արդյո՞ք բարու և չարի գոյությունը մարդուց անկախ չէ, - հարցրեց ներկաներից մեկը:

- Այո, - ասեց Գ.-ն, - սակայն մենք դրանից շատ հեռու ենք. անիմաստ է նույնիսկ ներկայումս փորձել հասկանալ դա: Պարզապես հիշեք մեկ բան:

Մարդու համար բարու և չարի միակ մշտական հասկացությունը կապված է էվոյուցիայի գաղափարի հետ, իհարկե, ոչ թե մեխանիկական էվոյուցիայի, այլ մարդու զարգացման հետ, որի համար անհրաժեշտ են գիտակից ջանքեր, գոյի փոփոխություն, ներքին միասնության և մշտական Ես-ի ձևավորում:

Բարու և չարի մշտական գաղափարը մարդու մոտ կարող է ձևավորվել միայն մշտական նպատակի առկայության կամ մշտական հասկացողության դեպքում: Եթե մարդը հասկանա, որ ինքը քնած է և ցանկանա զարթնել, ապա այն ամենն, ինչ նպաստի նրա զարթոնքին կլինի *բարի*, իսկ այն ամենն, ինչ խոչընդոտի դրան և երկարացնի նրա քունը, *չարիք* կթվա: Հենց նույն ձևով էլ մենք կտարոտրոշենք բարին ու չարը ուրիշ մարդկանց նկատմամբ: Այն, ինչ օգնում է նրանց արթնանալ բարին է, այն, ինչ խոչընդոտում է նրանց՝ չարը: Մակայթն դա այդպես է միայն այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են արթնանալ, այսինքն՝ հասկանում են, որ քնած են: Նրանք, ովքեր չեն հասկանում, որ քնած են, չեն կարող արթնանալու որևէ ցանկություն ունենալ, չեն կարող տարբերակել բարին ու չարը: Եվ քանի որ մարդկանց մեծամասնությունը չի գիտակցում և չի էլ գիտակցի, որ քնած է, բարին ու չարը չեն կարող իրականում գոյություն ունենալ նրանց համար: Սա հակասում է համընդհանուր գաղափարներին: Մարդիկ սովոր են կարծելու, որ բարին ու չարը պետք է որ նույնը լինեն բոլորի համար և ամենից առաջ՝ որ բարին և չարը գոյություն ունեն բոլորի համար: Սակայն իրականում բարին ու չարը գոյություն ունեն միայն մի քանիսի համար, նրանց համար, ովքեր ունեն նպատակ և հետապնդում են այն: Այնուհետև այն, ինչ խոչընդոտում է այդ նպատակի հետապնդմանը չարիք է, իսկ այն, ինչ օգնում է՝ բարիք:

Սակայն իհարկե քնած մարդկանց մեծ մասը կասեն, որ նրանք ունեն նպատակ և շարժվում են որոշակի ուղղությամբ: Մարդու կողմից այն փաստի գիտակցումը, որ նա չունի որևէ նպատակ և որևէ ուղղությամբ չի շարժվում, նշան է նրան, որ նրա համար զարթոնքը մոտալուտ է կամ հնարավոր: Ջարթոնքը սկսվում է այն ժամանակ, երբ մարդը գիտակցում է, որ որևէ ուղղությամբ չի շարժվում և չգիտի, թե որ ուղղությամբ շարժվել:

Ինչպես արդեն բացատրվել է, գոյություն ունեն շատ հատկանիշներ, որ մարդիկ իրենց են վերագրում, սակայն որոնք իրականում կարող են պատկանել միայն առավել բարձր զարգացման աստիճան ունեցող և էվոյուցիոն առավել բարձր մակարդակի պատկանող մարդկանց, ի տարբերություն մարդ համար մեկին, երկուսին և երեքին: Անհատականություն, միակ և մշտական Ես, գիտակցություն, կամք, *անելու ընդունակություն*, ներքին ազատություն՝ այս ամենը հատկանիշներ են, որոնց սովորական մարդը չի տիրապետում: Միննույն կատեգորիային են պատկանում նաև բարու և չարիքի գաղափարները, որի գոյությունը պայմանավորված է *մշտական* նպատակով, ուղղությամբ և ծանրության կենտրոնով:

Բարու և չարիքի գաղափարը երբեմն կապվում է ճշմարտության և կեղծիքի գաղափարների հետ: Բայց ինչպես բարին և չարը գոյություն չունեն հասարակ մարդկանց համար, այնպես էլ գոյություն չունեն ճշմարտությունը և կեղծիքը:

Մշտական ճշմարտությունը և մշտական կեղծիքը կարող են միայն մշտական մարդու համար գոյություն ունենալ: Եթե մարդն ինքը շարունակաբար փոփոխվում է, ապա նրա համար ճշմարտությունը և կեղծիքը նույնպես անընդհատ փոփոխվում են: Եվ, եթե մարդը յուրաքանչյուր պահին գտնվում է մեկ այլ հոգեվիճակում, ապա ճշմարտության ընկալումը նրա կողմից այնքան տարբեր կլինի, որքան իր պատկերացումը բարու մասին: Մարդը երբևիցե չի նկատում, թե ինչպես է սկսում ճշմարիտ համարել այն, ինչ երեկ նա կեղծ էր համարում և հակառակը: Նա այս անցումները չի նկատում, ինչպես որ չի նկատում իր սեփական Ես-ի անցումները այլ Ես-երի:

Հասարակ մարդու կյանքում ճշմարտությունը և կեղծիքը որևէ բարոյական արժեք չեն կրում, քանի որ մարդը երբևիցե չի կարող հետևել մեկ և միակ ճշմարտության: Նրա



ճշմարտությունը փոփոխական է: Եթե որոշ ժամանակ այն չի փոխվում, դա միայն այն պատճառով է, որ «բուֆերները» դա թույլ չեն տալիս: Մարդը երբևիցե չի կարող *ճշմարտությունն ասել*: Երբեմն «այն» *ասում է ճշմարտությունը*, երբեմն «այն» *ստում է*: Հետևաբար նրա ճշմարտությունը և սուտը որևէ արժեք չունեն: Դրանցից ոչ մեկը նրանից կախված չեն, երկուսն էլ կախված են պատահականությունից: Նույնը կարելի է ասել մարդկանց խոսքերի, մտքերի, զգացմունքների, ճշմարտության և կեղծավորության մասին, նրա պատկերացումների մասին:

Կյանքում ճշմարտության և կեղծիքի փոխհարաբերությունը հասկանալու համար, մարդը պետք է տարորոշի կեղծիքը իր ներսում, ինչպես նաև այն մշտական և հավիտենական ստերը, որ նա ինքն իրեն է ասում:

«Բուֆերներն» են ստեղծում այս ստերը: Որպեսզի քո ներսում կարողանաս ոչնչացնել այդ ստերը, անհրաժեշտ է ոչնչացնել «բուֆերները»: Բայց մարդը չի կարող ապրել առանց «բուֆերների»: «Բուֆերները» ինքնաբերաբար սկսում են դեկավարել մարդու գործողությունները, խոսքերը, մտքերը և զգացմունքները: Եթե ոչնչացվեն «բուֆերները», կանհետանա վերահսկողությունը: Մարդը չի կարող գոյություն ունենալ առանց վերահսկողության, նույնիսկ, եթե այն մեքենայական վերահսկողություն է: Միայն կամք՝ գիտակից վերահսկողություն ունեցող մարդը կարող է ապրել առանց «բուֆերների»: Հետևաբար, եթե մարդը սկսի ոչնչացնել «բուֆերները» իր ներսում, նա միևնույն ժամանակ պետք է ձևավորի կամք: Եվ քանի որ հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում պատվերով ձևավորել կամք, մարդը կարող է մնալ ջախջախված իր «բուֆերներով» և կամքով, որը դեռևս բավականաչափ չի ձևավորվել:

Այդ պատճառով էլ դպրոցական աշխատանքի ընթացքում, որը ներառում է «բուֆերների» ոչնչացումը, մարդը պետք է պատրաստ լինի ենթարկվել մեկ այլ մարդու կամքին այնքան ժամանակ, մինչև չձևավորի իր սեփական կամքը: Սովորաբար ամենից առաջ ուսումնասիրության առարկան ենթակայությունն է այլ մարդու կամքին: Օգտագործելով «ուսումնասիրել» բառը՝ ես ցանկանում եմ, որպեսզի մարդը հասկանա, թե ինչու է անհրաժեշտ նման հնազանդությունը և ինչու նա պետք է սովորի հնազանդվել: Վերջինս այդքան էլ հեշտ գործ չէ: Երբ մարդը սկսում է սեփական անձի ուսումնասիրությունը, նպատակ ունենալով վերահսկողություն ձեռք բերել իր նկատմամբ, նա սովոր է հավատալու իր սեփական որոշումներին: Նույնիսկ այն փաստը, որ նա հասկացել է իր անձը փոխելու անհրաժեշտությունը, նրան հուշում է, որ իր որոշումները ճիշտ են՝ այսկերպ ուժեղացնելով նրա համոզմունքը: Սակայն, երբ մարդը սկսում է իր վրա աշխատել, նա պետք է հրաժարվի իր սեփական որոշումներից, «գոհաբերի իր սեփական որոշումները», քանի որ հակառակ դեպքում՝ այն մարդու կամքը, ով ուղղորդում է տվյալ անձի աշխատանքը, չի կարողանա վերահսկել վերջինիս գործողությունները:

Կրոնական ուղղության դպրոցներում առանց որևէ բացատրության նախ և առաջ պահանջում են «հնազանդություն», այն է՝ ամբողջական և անառարկելի հպատակություն: Չորրորդ ուղղության դպրոցները ամենից առաջ պահանջում են հասկացողություն: Գործադրած ջանքերի արդյունքները միշտ համաչափ են հասկացողությանը:

Իր սեփական որոշումներից հրաժարվելը, մեկ ուրիշի կամքին հնազանդվելը մարդուն կարող են անհաղթահարելի դժվարությունների հանգեցնել, եթե նա նախօրոք չգիտակցի, որ որևէ բան ոչ գոհաբերում, ոչ էլ փոխում է իր կյանքում, որ ողջ իր կյանքում նա ենթարկվել է ինչ-որ արտաքին կամքի և երբևիցե ինքնուրույն որոշումներ չի կայացրել: Սակայն մարդը սա չի գիտակցում: Նա կարծում է, թե ազատ ընտրության իրավունք ունի: Նրա համար դժվար է հրաժարվել այն խաբկանքից, որ նա ինքնուրույն է ուղղորդում և կազմակերպում իր կյանքը: Սակայն մինչև մարդը չազատվի խաբկանքներից, սեփական անձի վրա որևէ աշխատանք անհնարին կլինի:

Նա պետք է հասկանա, որ *ինքը գոյություն չունի*, որ որևէ կորցնելու բան չունի, նա պետք է, բառիս բուն իմաստով, գիտակցի իր «ոչնչությունը»:

Գիտակցելով, որ ինքը ոչնչություն է՝ մարդը կարող է հաղթահարել ուրիշին հպատակվելու վախը: Որքան էլ տարօրինակ թվա, այս վախը ամենալուրջ խոչընդոտներից է մարդու ճանապարհին: Մարդը վախենում է, որ նրան կստիպեն անել այն, ինչ հակադրվում է իր սկզբունքներին, հայացքներին և գաղափարներին: Դեռ ավելին՝ այս վախը անմիջապես նրանում ստեղծում է խաբկանք այն բանի վերաբերյալ, որ նա իսկապես ունի սկզբունքներ, հայացքներ և համոզմունքներ, որոնք իրականում երբևիցե գոյություն չեն ունեցել և չեն էլ կարող ունենալ: Այն մարդը, որ իր կյանքում երբևիցե բարոյականության մասին չի մտածել, հանկարծակի սկսում է վախենալ, որ նրան կստիպեն դիմել որևէ անբարոյական քայլի: Այն մարդը, որ երբևիցե չի մտածել իր առողջության մասին և արել է ամեն հնարավոր բան այն քայքայելու համար, սկսում է վախենալ, որ նրան կստիպեն անել այն, ինչ կարող է վնասել իր առողջությանը: Այն մարդը, որն իր ողջ կյանքում բոլորին ամենուր խաբել է ամենաանամոթ ձևով, հանկարծ սկսում է վախենալ, որ նրան կստիպեն խաբել և այսպես շարունակ: Ես մի արբեցողի գիտեի, որ ամենից շատ վախենում էր, որ իրեն կստիպեն խմել:

Շատ հաճախ հենց մեկ ուրիշի կամքին ենթարկվելու վախն է ամենաուժեղ կերպով իրեն դրսևորում: Մարդը չի գիտակցում, որ այն հնազանդությունը, որին նա գիտակցաբար համաձայնում է, իր սեփական կամքը ձեռք բերելու միակ ուղին է:

Հաջորդ անգամ Գ.-ն զրույցը սկսեց կամքի մասին հարցից:

- Կամքի՝ սեփական և մեկ այլ մարդու, խնդիրը ավելի խրթին է, քան կթվա առաջին հայացքից: Մարդը որևէ բան *անելու*՝ իրեն և իր բոլոր գործողությունները վերահսկելու համար, չունի բավարար կամք. սակայն նա ունի բավարար կամք մեկ այլ անձի ենթարկվելու համար: Եվ միայն այսկերպ նա կարող է խուսափել *պատահականության օրենքից*: Որևէ այլ ուղի չկա: Ես ակնարկել եմ արդեն մարդու կյանքում *ճակատագրի* և *պատահականության* մասին: Մենք այժմ այս բառերի նշանակությունը ավելի մանրակրկիտ կերպով կքննարկենք: Ճակատագիր նույնպես գոյություն ունի, սակայն ոչ բոլորի համար: Շատերը անջատված են իրենց ճակատագրից և ապրում են միայն պատահականության օրենքի համաձայն: Ճակատագիրը մոլորակային ազդեցությունների արդյունք է, որը համապատասխանում է մարդու տիպին: Մենք տիպերից ավելի ուշ կխոսենք: Մինչ այդ դուք պետք է մի բան հասկանաք: Մարդը կարող է ունենալ ճակատագիր, որը համապատասխանում է իր տիպին, սակայն իրականում նա երբևիցե դա չի ունենում: Մա նրանից է, որ ճակատագիրը հարաբերվում է մարդու միայն մի մասի հետ, այն է՝ իր *էության*:

Անհրաժեշտ է հասկանալ, որ մարդը բաղկացած է երկու մասից՝ *էությունից* և *անհատականությունից*: Մարդու էությունը այն է, ինչ *իրենն է*: Մարդու անհատականությունը այն է, ինչ «իրենը չէ»: «Իրենը չէ» ենթադրում է այն, ինչ մարդ դրսից է ստանում և սովորում, մի բան որը արտացոլում է նրա հիշողության մեջ դրոշմված բոլոր արտաքին տպավորությունները և զգացողությունները, զգացմունքները, բոլոր այն խոսքերը և շարժումները, որոնք ձեռք են բերվել սովորելու, ընդօրինակման միջոցով. այս ամենը «իր սեփականը չէ», այս ամենը անհատականություն է:

Սովորական հոգեբանության տեսանկյունից մարդու բաժանումը անհատականության և էության հազիվ թե բացատրելի լինի: Ավելի ճիշտ կլինի ասել, որ հոգեբանության մեջ նման բաժանում ընդհանրապես գոյություն չունի:

Փոքր երեխան որպես այդպիսին անհատականություն չունի: Նա այնպիսին է ինչպիսին, որ կա: Նա էություն է: Նրա ցանկությունները, ճաշակը, համակրությունները և հակակրությունները արտացոլում են նրա գոյը այնպիսին, ինչպիսին որ այն կա:

Սակայն հենց սկսվում է այսպես կոչված «ուսուցման» փուլը, սկսվում է նաև անհատականության աճը: Անհատականությունը մասամբ ձևավորվում է այլ մարդկանց միտումնավոր ազդեցության միջոցով. այն է՝ երեխայի «ուսումնառության» և մասամբ էլ երեխայի կողմից մեծահասակներին ակամա ընդօրինակելու միջոցով: Անհատականության ձևավորման գործում մեծ դեր է խաղում նաև «դիմադրողականությունը» շրջապատող մարդկանց հանդեպ, ինչպես նաև նրանցից «իրենը» կամ «իրականը» քողարկելու փորձերը:

Էությունը ճշմարիտն է մարդու մեջ, անհատականությունը՝ կեղծը: Սակայն անհատականության աճին զուգահեռ էությունը ավելի ու ավելի հազվադեպ է դրսևորվում, ավելի ու ավելի է թուլանում և շատ հաճախ դադարում է աճել իր զարգացման շատ վաղ շրջանում: Շատ հաճախ պատահում է, որ հասուն մարդու էությունը, նույնիսկ շատ ինտելեկտուալ, «կիրթ» մարդունը, դադարում է աճել հինգ կամ վեց տարեկանում հասակում: Սա նշանակում է, որ այն ամենը, ինչ մենք տեսնում ենք այդ մարդու մոտ «իրենը չէ»: Այն , ինչ մարդունն է՝ նրա էությունը, սովորաբար արտահայտվում է իր բնազդներում և ամենահասարակ զգացմունքներում: Կան դեպքեր սակայն, երբ մարդու էությունը աճում է նրա անհատականությանը զուգահեռ: Նման դեպքերը շատ հազվադեպ բացառություններ են՝ հատկապես բարեկիրթ կյանքի պայմաններում: Էությունը զարգացման ավելի մեծ հնարավորություն ունի զարգանալու բնությանն ավելի մոտ ապրող մարդկանց մոտ, որոնք ապրում են մշտական պայքարի և վտանգի բարդ պայմաններում:

Սակայն, որպես կանոն, նման մարդկանց անհատականությունը շատ քիչ է զարգանում: Նրանց մոտ կա ավելի շատ բան, որ իրենցն է, և ավելի քիչ՝ որն «իրենցը չէ», այսինքն՝ նրանց մոտ բացակայում է կրթությունը, ուսումը, կուլտուրան: Կուլտուրան ստեղծում է անհատականություն և միևնույն ժամանակ անհատականության արդյունք է: Մենք չենք գիտակցում, որ մեր ողջ կյանքում, այն ամենն, ինչ մենք կոչում ենք քաղաքակրթություն, փիլիսոփայություն, արվեստ, քաղաքականություն ստեղծվում է մարդկանց անհատականության կողմից, այն է՝ նրա կողմից, ինչը «իրենցը չէ»:

Այն տարրերը, որոնք «իրենը չեն» տարբերվում են *իրեն* պատկանող տարրերից նրանով, որ դրանք կարող են կորչել, փոփոխվել կամ արհեստականորեն առևանգվել:

Հնարավորություն կա փորձարկման միջոցով ստուգել անհատականության հարաբերությունը էության նկատմամբ: Արևելյան դպրոցներում գոյություն ունեն ուղիներ և միջոցներ, որոնց օգնությամբ հնարավոր է տարանջատել մարդու անհատականությունը նրա էությունից: Այս նպատակով երբեմն օգտագործվում է հիպնոզը, երբեմն էլ հատուկ թմրամիջոցներ կամ որոշակի վարժություններ: Եթե մարդու անհատականությունը և էությունը որոշ ժամանակով առանձնացվում են նշված միջոցների օգնությամբ, նրանում ձևավորվում է երկու էակ. նրանք խոսում են տարբեր ձայներով, ունեն տարբեր ճաշակներ, նպատակներ, հետաքրքրություններ: Հաճախ պարզվում է այս էակներից մեկը փոքր երեխայի մակարդակին է: Շարունակելով փորձարկումը՝ հնարավոր է այս էակներից մեկին քնացնել. հնարավոր է նաև սկսել փորձարկումը՝ քնացնելով անհատականությունը կամ էությունը: Որոշ թմրամիջոցներ ունեն անհատականությունը քնացնելու հատկություն, որը ազդեցություն չի թողնում էության վրա: Այս թմրամիջոցն ընդունելուց հետո որոշ ժամանակ մարդու անհատականությունը կարծես անհետանում է և մնում է մարդու էությունը: Արդյունքում մարդը, ով լի էր ամենատարբեր և վերամբարձ գաղափարներով, համակրանքով և հակակրանքով, սիրով և ատելությամբ, կապվածությամբ, հայրենասիրությամբ, սովորություններով, ճաշակներով, ցանկություններով, համոզմունքներով, հանկարծ դառնում է բավականին դատարկ՝ մտքերից, զգացմունքներից, համոզմունքներից, հայացքներից զուրկ մի մարդ: Նա այժմ անտարբեր է այն ամենի հանդեպ, ինչը նրան նախկինում անհանգստացնում էր: Երբեմն նա տեսնում է իր առօրյա տրամադրության կամ ամպագորգոռ բառերի արհեստական և երևակայական բնույթը. երբեմն նա նույնիսկ մոռանում է դրանք, կարծես դրանք երբևիցե գոյություն չեն ունեցել: Այն

ամենը, ինչի համար նա պատրաստ էր գոհաբերելու իր կյանքը, այժմ նրան անհեթեթ և անհիմաստ են թվում, ուշադրությանը ոչ արժանի: Իր մոտ նա ընդամենը գտնում է փոքրաթիվ բնագոյային հակումներ և ճաշակներ: Նրան դուր են գալիս քաղցրավենիքը, ջերմությունը, նրան դուր չեն գալիս ցուրտը, աշխատանքի մասին մտքերը, և ընդհակառակը՝ նրան դուր է գալիս ֆիզիկական շարժումների գաղափարը: Այդքանը:

Դեպքից դեպք, երբ ամենաքիչն էս ակնկալում, էությունը ամբողջովին աճում և զարգանում է մարդու ներսում, եթե նույնիսկ նրա անհատականությունը թերզարգացած է. այսժամ էությունն ու այն ամենն ինչ լուրջ և իրական է մարդու մոտ, միաձուլվում են:

Սակայն սա շատ հազվադեպ է տեղի ունենում: Որպես կանոն՝ մարդու էությունը կամ շատ պրիմիտիվ է, վայրագ ու երեխայական, կամ էլ պարզապես բթամիտ: Էության զարգացումը կախված է սեփական անձի վրա կատարած աշխատանքից:

Սեփական անձի վրա աշխատելիս՝ շատ կարևոր է այն պահը, երբ մարդը սկսում է տարբերել իր անհատականությունը էությունից: Մարդու իրական Ես-ը, նրա անհատականությունը կարող է սկիզբ առնել նրա էությունից: Կարելի է ասել, որ մարդու անհատականությունը նրա ձևավորված, հասուն էությունն է: Սակայն էության զարգացումը հնարավոր դարձնելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է թուլացնել էության վրա անհատականության կողմից գործադրվող մշտական ճնշումը, քանի որ էության աճի խոչընդոտներն անհատականության մեջ են:

Եթե մենք վերցնենք միջին մակարդակի բարեկիրթ մարդուն, ապա կտեսնենք, որ մեծամասամբ անհատականությունը նրան ակտիվ տարրն է, մինչդեռ էությունը՝ պասսիվ: Մարդու ներքին աճը չի կարող սկսվել այնքան ժամանակ, որքան իրերի այս դասավորվածությունը մնում է անփոփոխ: Անհատականությունը պետք է ձեռք բերի պասսիվ բնույթ, իսկ էությունը՝ ակտիվ: Սա կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե հնարավոր լինի վերացնել կամ թուլացնել «բուֆերները», քանի որ «բուֆերները» այն հիմնական միջոցներն են, որոնց օգնությամբ անհատականությունը իրեն է ենթարկում էությունը:

Ինչպես արդեն նշվել է, պակաս բարեկիրթ մարդու մոտ էությունը ավելի զարգացած է, քան բարեկիրթ մարդու մոտ: Թվում է, թե վերջինս պետք է որ աճի ավելի մեծ հնարավորություն ունենա, սակայն իրականում դա այդպես չէ, քանի որ նրա անհատականությունը բավականաչափաբեզ զարգացած չէ: Ներքին աճի՝ սեփական անձի վրա աշխատելու համար անհատականության որոշակի զարգացվածություն է անհրաժեշտ, ինչպես նաև որոշակի ուժեղ էություն: Անհատականությունը բաղկացած է «զլաններից» և «բուֆերներից», որոնք կենտրոնների որոշակի աշխատանքի արդյունք են: Թերզարգացած անհատականություն նշանակում է, որ բացակայում են «զլանները», այն է՝ գիտելիքները, տեղեկատվությունը, այն նյութը, որի վրա պետք է հիմնված լինի սեփական անձի վրա տարվելիք աշխատանքը: Առանց գիտելիքների որևէ պաշարի, առանց որոշակի նյութի, որը «իրեն չի պատկանում», մարդը չի կարող սկսել իր վրա աշխատել, նա չի կարող սկսել պայքար իր մեխանիկական սովորությունների դեմ այն պարզ պատճառով, որ որևէ շարժառիթ կամ դրդապատճառ չի լինի նման աշխատանք սկսելու համար:

Սակայն, դա չի նշանակում, որ մարդու համար բոլոր ուղիները փակ են: Ֆաքիրի, ինչպես նաև վանականի ուղիները, որոնք չեն պահանջում որևէ մտավոր զարգացում, նրա համար բաց են: Սակայն այս դեպքում մեթոդները և միջոցները, որոնք կարող է օգտագործել զարգացած, մտավոր ունակություններ ունեցող մարդը, նրա համար հնարավոր չեն լինի: Այսպիսով, էվոյուցիան հավասարապես դժվար է ինչպես բարեկիրթ, այնպես էլ անբարեկիրթ մարդկանց համար: Բարեկիրթ մարդը հեռու է ապրում բնությունից, գոյության բնական պայմաններից. նա ապրում է կյանքի արհեստական պայմաններում և զարգացնում իր անհատականությունը իր էության հաշվին: Ոչ այդքան բարեկիրթ մարդը, ապրելով առավել նորմալ և բնական պայմաններում, զարգացնում է իր էությունը իր անհատականության

հաշվին: Սեփական անձի վրա բարեհաջող աշխատանք սկսելու համար անհրաժեշտ է հանգամանքների պատահական զուգադիպություն՝ անհատականության և էության հավասարագոր զարգացում: Նման զուգադիպությունը հաջողության նախադրային է: Եթե էությունը շատ քիչ է զարգացած, բավականին երկար նախապատրաստական աշխատանք է հարկավոր. այս աշխատանքը կարող է ապարդյուն անցնել, եթե մարդու էությունը փտած է ներքուստ և անվերականգնելի թերություններ է ձեռք բերել: Նման պայմանների մենք շատ հաճախ ենք հանդիպում:

Անհատականության շեղված զարգացումը շատ հաճախ այնքան վաղ շրջանում է կանխում էության զարգացումը, որ վերջինս վերածվում է փոքր դեֆորմացված մի երևույթի: Այդ փոքր դեֆորմացված երևույթից որևէ բան հնարավոր չէ ստանալ:

Դեռ ավելին, շատ հաճախ մարդու էությունը մահանում է, մինչդեռ նրա անհատականությունը և մարմինը մնում են կենդանի: Մեծ քաղաքի փոխոցներում մեզ հանդիպող մարդկանց զգալի մեծամասնությունը մարդիկ են, որոնք ներքուստ դատարկ են, այսինքն՝ իրականում նրանք *արդեն մահացած են*:

Մեր բախտը բերել է, որ չենք տեսնում և չենք գիտակցում դա: Եթե իմանայինք նման մահով մահացած մարդկանց քանակությունը և թե իրականում որքան նման մահացած մարդիկ են դեկավարում մեր կյանքը, ապա կխելագարվեինք սարսափից: Եվ իսկապես մարդիկ խելագարվում են շատ հաճախ, քանի որ առանց համապատասխան պատրաստության նրանք այս բնույթի երևույթների են բախվում, այսինքն՝ նրանք տեսնում են մի բան, որը չպետք է տեսնեն: Որպեսզի մարդը, վտանգի իրեն չենթարկելով, կարողանա տեսնել, նա պետք է ճիշտ ուղու վրա հայտնվի: Որևէ բան անելու անընդունակ մարդը տեսնելով ճշմարտությունը իհարկե կխելագարվի: Սակայն սա շատ հազվադեպ է տեղի ունենում: Մովորաբար ամեն ինչ այնպես է կազմակերպված, որ մարդը կանխավ որևէ բան չի կարող տեսնել: Անհատականությունը տեսնում է այն, ինչ ցանկանում է տեսնել և այն, ինչ իր կյանքին չի խոչընդոտում: Նա երբևիցե չի տեսնում այն, ինչ իրեն դուր չի գալիս: Սա միևնույն ժամանակ և լավ է, և վատ: Այն լավ է, եթե մարդը ցանկանում է քնել. վատ է, եթե նա ցանկանում է արթնանալ:

- Եթե ճակատագիրը կարող է ազդել էության վրա, արդյո՞ք սա կնշանակի, որ ի տարբերություն պատահականության, ճակատագրը ավելի բարենպաստ է մարդու համար, - հարցրեց ներկաներից մեկը: - Եվ կարո՞ղ է արդյոք ճակատագիրը մարդուն հանգեցնել աշխատանքին:

- Ոչ, դա բացարձակապես այդպես չէ, - պատասխանեց Գ.-ին: Ճակատագրի առավելությունը պատահականության հանդեպ այն է, որ հնարավոր է հաշվարկել այն, նախօրոք իմանալ դրա մասին, ինչը թույլ կտա նախապատրաստվելու ապագային: Պատահականության դեպքում որևէ բան հնարավոր չէ կանխատեսել: Սակայն ճակատագիրը կարող է լինել դժբախտ և դժվարին: Այնուամենայնիվ, գոյություն ունեն միջոցներ մարդուն իր ճակատագրից մեկուսացնելու համար: Այս ուղղությամբ կատարվելիք առաջին քայլը կլինի *համընդհանուր օրենքներից* հեռանալը: Այնպես ինչպես կան առանձին պատահարներ, այդպես էլ կան համընդհանուր կամ հավաքական պատահարներ: Ինչպես որ կան առանձին ճակատագրեր, այնպես էլ գոյություն ունեն համընդհանուր կամ հավաքական ճակատագրեր: Հավաքական պատահարը կամ հավաքական ճակատագիրը դեկավարվում է *համընդհանուր օրենքներով*: Եթե մարդը ցանկանում է ձևավորել իր սեփական անհատականությունը, նա, առաջին հերթին, պետք է ազատվի *համընդհանուր օրենքներից*: Համընդհանուր օրենքները ոչ մի դեպքում պարտադիր պայման չեն մարդու համար. մարդը կարող է ազատ արձակվել «բուֆերներից» և երևակայությունից: Այս ամենը կախված է նրանից, թե արդյոք մարդը կկարողանա ազատագրվել անհատականությունից: Անհատականությունը սնվում է երևակայությամբ և կեղծիքով: Եթե կեղծիքը, որում մարդն ապրում է նվազում է, ապա նվազում է նաև երևակայությունը. անհատականությունը շատ շուտով թուլանում է և սկսում է ենթարկվել մարդուն, ճակատագրին կամ *աշխատանքին*, որն իր հերթին առաջնորդվում է մեկ այլ մարդու

կամքով: Մա մարդուն կուղղորդի այնքան ժամանակ, մինչև կձևավորվի իր սեփական կամքը, ինչը թույլ կտա նրան ընդվզելու պատահարների և անհրաժեշտության դեպքում՝ ճակատագրի դեմ:

Զրույցները տևել են մի քանի ամիս: Բնականաբար հնարավոր չէ վերարտադրել զրույցների ճիշտ հերթականությունը, քանի որ շատ հաճախ Գ.-ն մի երեկոյի ընթացքում շոշափում էր մոտ քսան տարբեր թեմաներ: Շատ թեմաներ կրկնվում էին, ինչը կախված էր ներկաների կողմից տրվող հարցերից, գաղափարներից, շատ թեմաներ այնքան փոխկապակցված էին, որ դրանց կարելի էր միայն արհեստականորեն տարանջատել:

Այդ ժամանակահատվածում արդեն որոշ տեսակի մարդիկ սկսել էին բացասական մոտեցում ցուցաբերել մեր աշխատանքի նկատմամբ: Բացի այն, որ մարդկանց զայրացնում էր «սիրո բացակայությունը», նրանց զայրացնում էր նաև վարձավճարի հարցը: Այս կապակցությամբ պետք է նշել, որ զայրույթը շատ ավելի բնորոշ էր ոչ թե այն մարդկանց, ովքեր վճարում էին դժվարությամբ, այլ նրանց ովքեր ունեին միջոցներ և ում համար պահանջվող վարձը պարզապես չնչին գումար էր կազմում:

Այն մարդիկ, ովքեր չէին կարող վճարել կամ շատ քիչ էին կարող վճարել հասկանում էին, որ հույս չէր կարելի դնել հենց այնպես որևէ բան ստանալու վրա. նրանք հասկանում էին որ Գ.-ի աշխատանքը, նրա՝ Պետերբուրգ կատարած ճամփորդությունները, նրա և մյուսների տրամադրած ժամանակը, ծախսեր էին, որոնք պետք է փակվեին: Ովքեր ունեին այդ գումարը դա չէին հասկանում և չէին ցանկանում հասկանալ:

- Ուրեմն մենք Երկնային Արքայություն մուտք գործելու համար պետք է վճարե՞նք,- ասում էին նրանք: - Մարդկին չպետք է վճարեն նման բաների համար, ոչ էլ կարելի է նրանցից վարձատրություն պահանջել: Քրիստոսն իր աշակերտներին ասում էր. «Վերցրեք ոչ քսակը, ոչ էլ գումարը», իսկ դուք հազար ռուբլի եք պահանջում: Դրանից շատ լավ բիզնես կարելի է անել: Պատկերացրեք, եթե ունենայիք հարյուր անդամ: Մա արդեն կկազմեր հարյուր հազար, իսկ ի՞նչ կլինեք եթե ունենայիք երկու հարյուր, երեք հարյուր անդամ: Երեք հարյուր հազարը մեկ տարում շատ լավ գումար է:

Գ.-ն միշտ ժպտում էր, երբ նրան պատմում էի նման խոսակցություններից:

- Վերցրեք ոչ քսակը, ոչ էլ գումարը: Գնացքի համար տոմս էլ չգնենք ուրեմն, չվճարենք հյուրանոցի համար: Տեսնում եք, թե որքան կեղծավորություն և կեղծ բարեպաշտություն կա այստեղ: Ոչ, նույնիսկ, եթե մեզ որևէիցե գումար պետք չլինեք, այնուամենայնիվ հարկավոր կլինեք պահել այս վարձը: Այն միանգամից մեզ կազատի անպետք մարդկանցից: Ոչինչ այդքան չի բացահայտում մարդկանց, որքան փողի նկատմամբ նրանց մոտեցումը: Նրանք իրենց անձնական երևակայության վրա պատրաստ են ծախսել որքան ցանկանաք, իսկ մեկ այլ մարդու աշխատանքը չեն արժեքավորի: Ես պետք է աշխատեմ նրանց համար և ձրի նրանց տամ այն ամենն, ինչ իրենք բարեհաճեն վերցնել ինձնից: *«Ինչպե՞ս կարելի է վաճառել գիտելիքները»:* Դրանք պետք է անվճար լինեն»: Հենց այս պատճառով է, որ սրա դիմաց վարձատրություն է անհրաժեշտ: Որոշ մարդիկ երբևիցե այս արգելքը չեն հաղթահարի: Եվ եթե նրանք չհաղթահարեն այս մեկը, ապա դա նշանակում է, որ չեն հաղթահարի նաև մյուսը: Բացի այդ, կան այլ պատճառներ: Դուք ավելի ուշ կհասկանաք:

Այլ պատճառները շատ պարզունակ էին: Մարդկանցից շատերն իրոք չէին կարող վճարել: Եվ չնայած այն հանգամանքին, որ Գ.-ն սկզբունքայնորեն այս հարցը շատ խիստ էր դրել, գործնականում նա երբևիցե չէր մերժում մարդկանց միայն այն պատճառով, որ նրանք չէին կարող վճարել: Իսկ շատ ավելի ուշ բացահայտեցի, որ նա նույնիսկ աջակցում էր իր աշակերտներից շատերին: Այն մարդիկ, ովքեր հազար ռուբլի էին վճարում, վճարում էին ոչ միայն իրենց համար, այլ նաև մյուսների համար: